



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20536

Ը

Է Մ Ա Յ Ա Բ Ե Ր Ո Ւ Թ Ի Ւ

Ն Ե Ր Ս Ւ Ս Ե Ը Ն Ե Գ Ր Ո Զ Տ

Սրբազն Նախադահին, յարգոյ Հոգաբարձուաց, մեծ. նոր ընտրեալ
Տեսչին եւ նորա մանկավարժական ժողովին

և և

Ն ո յ ն դ պ ր ո ց ի մ ե ր ձ ա կ ա յ

Յ Ո Ր Ե Լ Ե Ը Ն Ի Օ Ր Ո Ւ Ը Ն :

Մ ի գ ի ւ մ ր ե ց ւ ո յ կ ո զ մ ի ց :

Թ Ի Փ Լ Ի Փ . Օ :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԳԼԽԱԽՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒԻ

1874

373
9-67

373
9-67

Printed in Turkey

C

10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻ ՍԵՐԵՆ ԴՊՐՈՑՔ

Սրբազն Նախագահին, յարդոյ Հռովարձուաց, մեծ, նոր ընտրեալ
Տեսչին եւ նորա մանկավարժական ժողովին

և

Ն ոյն դպրոցի մերձակայքում

ՅՈՒՆԵԼԵԿՆԻ ՕՐՈՒԵՆ:

Մի գիւմը եցւոյ կողմէց:

2002

Թ. Ի. Գլիշ. Օ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԳԼԽԱԿՈՐ ԿԱՌԱՒԲՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻՆ ԿՈՎԿԱՑՈՒԻ

1874

2010

Printed in Turkey

ՅԵՐԵՎԱՆԻ ՏԵՂՄԱՆԻ ՏԵՂՄԱՆԻ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԽՄ ՄԻ ԿՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՍ:

Ա երջի նամակներովս ես ձեզ յայտնել էի թէ՛ մտադիր
եմ այս տարուայ մէջ իմ օրագրական և ըրագրական յօդուա-
ծների և թարգմանութեանց (թէ՛ տպած, թէ՛ ձեռագիր)՝
մնացածների փոքրիկ հաւաքածուն հրատարակել, և յիշել էի
հետեւեալ վերնազբերը. 1 «Պարձեալ վարժապետներ պատրաս-
տելոյ ննդիրը» (տպած), 2 «Ուսումնարանաց վնասակար աղ-
դեցութիւնքը» կամ «ուսումնարանաց առողջապահութիւն»
(հետեւողութիւն Փիրխօվին, տպած), 3 «Խորհրդածութիւնք
օրիորդաց կրթութեան վերայ և ծրագիր մեր օրիորդական
դպրոցաց համար» (գեռ ձեռագիր), 4 «Նամականիք Պետեր-
բուրգից (մանկավարժական, տպած), 5 «Որդիք առաւել կր-
թուած քան զնողք» (գաստիարակական, ձեռագիր), 6. «Մեր
վաճառական դասի կեանքը և հարեւանցի կամ ընդհանուր
խորհրդածութիւնք նորա մասին» (հրապարակախոսական,
տպած), —այս բոլորը զանազան յաւելուածներով պիտի վեր-
ջաբանվէր՝ 7. «Այժմեան ուսանողի երգ» ոտաննաւորով (տպած)
և կազմէր իմ ուսանողական երեխայրիքը».

Իմ այժմեան հանգամանքներում ես ժամանակ և միջոց չոնեցայ այդ իմ խօստումը կատարելու և վստահութիւն ես չոնեցայ մի հրատարակչի յանձնել բոլորը. որովհետեւ այդպիսի հրատարակութենից հաստատ գրամական արդինք առանալու յոյս տալը դժուար էր, մեր ժողովրդի այժմեան



9309
39

ընթերցածիրութեան աստիճանին նայելով. խնդրեմ ուրեմն՝ բարեկամք, իմ խոստման մի փոքրիկ մատով միայն բաւականանաք առ այժմ, այնէ՝ առաջարկեալ «Դ.Ռ.ՁԵԱ.» և ԿՐՊԻՆ վարժապետներ պատրաստելոյ խնդրին ԿՐԻՆԵԼՈՎ. որը 'ի հարկէ ձեզ համար չէ, որ տպումեմ, որովհետև դուք մեր խեղճ զրականութեանը կանոնաւոր և խղճմանօք հետեւոմք և ձեզ քաջայտնի է մեր հին և նոր պարբերական թերթերի փոքր 'ի շատէ արդարամիտ յօդուածների բովանդակութիւնը: Խնջույիշեալ շարքից այդ յօդուածն եմ տպում շտապաւահաները:

Ա երջի ժամանակներս «Սերսիսեան Դպրոցի այժմեան մեծապատիւ հոգաբարձուք, կ'ասես թէ՝ փոքր ինչ սթափեցին իրանց նիրհումից կամ կիսագործունէութենից, և մի քանի աղմկալից հոգաբարձական նիստեր ունեցան, ուր յայտնուեցաւ արդարացի ձգտումն ուսումնարանին տեսուչ ընտրելու և այդ խեղճ ուսումնարանը դէմ մի աստիճան բարձրացնելու իւր այժմեան դրութենից: Բայց ինչպէս ամէն մի որև իցէ հարցի կամ գործի մէջ սիստեմաթիքաբար չգործող, այլ պատահական գրգիռով քնից զարթած մարդկանց՝ թէ խորհրդածութեանց, թէ վեճաբանութեանց մէջ միշտ շփոթ, աղմուկ և իրար չհասկանալ կ'լինի, այնպէս էլ այժմ: Հոգաբարձուք կարծումն թէ՝ մեր հոգեոր իշխանութիւնը նոցա Ճնշումէ, ուսումնարանի կանոնաւոր յառաջաղիմութեան այս լոպէիս արգելառիթ է, ուրեմն՝ նախ և յառաջ պէտքէ մաքառել նորա դէմ: Հոգեոր իշխանութիւնը դեռ որոշ չիմանալով հոգաբարձուաց իսկական ձգտումները, նոր տեսուչ ընտրելու նպատակները, վախում է թէ՝ նոքա մեր ուսումնարանի պէս ուսումնարանի բարեկարգութեան քնքոյշ խնդիրների մէջ սիսալ քայլեր չ'անեն և յոնքը ուղղելու տեղ՝ աչքն էլ չհանեն, այսկերպ շփոթուած՝ Հ. Տ. անհիմն ընդդիմադրութիւններ

Է յայտնում, փոխանակ կանոնաւոր կերպիւ հոգաբարձական նիստեր կազմելու. հոգաբարձուաց ձգտումները և նպատակները մանրամասն քննելու և օրինաւոր գործելու կերպ որոշելու ընդհանուր խորհրդածութեամբ: Ես հաւատացած եմ թէ այսպիսի խոհական ընթացք բռնելով երկու կողմն ևս իրար կհասկանային, որ երկոցունց նպատակն էլ մի է. ո՞ր են է ԽՈՀԵՄ ԵՌԱՆԴԻՌԱՆ ՏԵՍՈՒԶ ԸՆՏՐԵԼՈՎ, ՊԵՍՈՒՄՆԱՐԱՆՆ ՈՐՈՇԵԱԼ ՈՒԳԴԱԹԻՒՆԸ, ՀԱՍՏԱՏ ԻՐԱԳՈՐԾԵԼ ԵՌ ՇՈՐԱՆ ԲԱՐՅՈՒՅՆԵԼ, ԻՒՅ ՕՅԹԵՆՆ ՈՒՍՈՒՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՍՏՈՒ ԳՐՈՒԹԻՒՆԵՑ:

Այսպիսի հանգամանաց մէջ մարդ, որ իւր կողմանէ փոքր 'ի շատէ հետաքրիր եղած է այդ Դպրոցի վեճակին և ապագային, միենոյն ժամանակ՝ ուղղակի կամ անմիջապէս չէ կարող մասնակցիլ Արբազան «Սախագահի և Հոգաբարձուաց ջանքերին՝ ուսումնարանը բարեկարգելու, սոցա իրար մէջ եղած վէճերը իւր կարողութեան չափ պարզաբանելու, — բնականաբար պարտական է գէթ հեռուից յայտնել իւր մտքերը և այդ կերպ իւր խեղճի առաջ գոնեա' պատասխանատու չմնալ:

Մեր մտքերը «Սերսիսեան Դպրոցի վերաբերութեամբ մենք գեռ սորանից երեք տարի առաջ պարզ և որոշակի կերպով յայտնած ենք 1870 թ. Արարատ ամսագրի համարների մէջ: Դոքա գրուած են՝ 1869 թ. Մասիսի մէջ տպած միւերկու յօդուածի («Սերսիսեան Դպրոցին վերաբերեալ») «ՈՒՐԱԿԱԿԱ» ստորագրութեամբ. Հայկական աշխարհի մէջ տպած պ. Գ. Արծրունուց՝ վարժապետներ պատրաստելու համար առաջարկած հնարների, և Արշալոյս Արարատեան շաբաթաթերթի մէջ տպած ամբողջ շարք յօդուածներու (որ յետոյ առանձին բրոշերով գուրս եկաւ՝ ամեր ուսումնարաններ և ուսուցիչներ վերնագրով) — այդ բոլորի դէմ և նոցա առիթով: Ա եր այդ յօդուածը Խջմիածնայ «Արարատի մէջ տպած լինելով՝ մենք համոզուեցանք, որ շատերին անծանօթ է մնա-

ցել և նոյն այն անձանց ուշադրութեանը չէ արժանացել, որոնց համար իսկ զրուած էր նա: Այժմ ևս արդի հոգաբարձուաց բերանից մասնաւոր խօստկցութեանց մէջ՝ Աերսիսեան Դպրոցի մասին նոյն շփոթ և անորոշ մաքերը լսեցինք և լսում ենք, զորս մենք աշխատում էինք մեր չափով պարզել գեռ 70 թ. այն գրուածի մէջ: Մէկն ասում է՝ «պէտքէ աշխատել Աերսիսեան Դպրոցը օրէալ ուսումնարան շնորհ» միւսը թէ՝ «բաւական է, որ նա Հայոց պրօգիմնազիա դառնայ, որ էդտեղից մեր աշակերտները գիմնազիօններ մտնեն—պրծաւ գնաց» և այլն և այլն: Ուստի մեզ պարագ համարեցինք, առանձին տպելով մեր յօդուածը (մի քանի յաւելուածներ անելով) մեր այժմեան հայացքներին), հրաւիրել Սրբազն Կախագահի, յարգելի հոգաբարձուաց և նորընտրելի Տեսչ ուշադրութիւնը դորա վերայ. և այդ ո՛չ այն մտքով թէ՝ մեր այդ գրուածի մէջ մի առանձին, ո՛չ ոքի գլխից դեռ չ'անցած նորանոր երեւելի մտքեր են յայտնուած. ո՛չ, մենք շատ հեռու ենք այդպիսի ամբարտաւան ինքնակուրութիւնից, — մենք աւելի համեստ նպատակ ունինք՝ մի կողմից մեր չափով նպաստելու հոգաբարձութեան խոհեմ, երկայնամիտ, հանդարտ խորհրդածութեանը, — փոխանակ աղմուկների, որ չ'եր վայելի մեր այժմեան դրութեանը: Միւս կողմից՝ Աերսիսեան Դպրոցի նպատակի և յառաջադիմութեան խնդիրները՝ որքան կարելի է բազմակողմանի քննելու և քննադատելու, — փոխանակ ինտրիկաներ վարելու՝ կամ հոգեւոր իշխանութիւնը՝ ժողովրդից ընտրեալներու դէմ յարուցանելու և փոխադարձը, նոյնպէս քննելու և միահամուռ քննադատելու տեսուչ ընտրածից ի՞նչ պահանջելներս, — փոխանակ նորահնար արտօնութիւններ գուրս բերելու և սուտ վախեր ստեղծելու, և մի բոպէական յաշխութեան համար մեր ուսումնարանաց գլխաւոր իրաւունքը և ապագան ոտնակոխ անելու:

Միով բանիւ, մենք գորանով կամինք կրկնել և կրկնել թէ՝ այդ խեղճ Դպրոցի յառաջադիմութեան խնդիրների մէջ հարկաւոր են արդարամիտ և բազմակողմանի քննութիւններ, և ո՛չ իրարու շուշագից վախ են ալ մեր երկու խմբագրութեանց ծիծաղելի և շատ ծանծաղամիտ բանակուուի կրքերը այդպիսի ծանրակշեռ գործերի մէջ ևս մտցնել: . . . :

Ուրեմն մեր այս յօդուածի մէջ բերած մտքերը՝ մեր զրականութեան մէջ վաղուց յայտնի են, մենք միայն զանազան ժամանակները կապել ենք իրարու հետեղաբար, և Աերսիսեան Դպրոցը մեր է՛ն ժողովրդի, խեղճ ժողովրդի բուն կարօտին, այժմ մեան ամենակարեւոր կարեթին ծառայացնելու ենթադրութիւն արել ենք: Այդ յօդուածին և նորա ենթադրութեանը կամ նպատակին մեր հոգեւոր իշխանութիւնը արդէն համակրել է, որովհետեւ Ահճափառ Աթողիկոսի հրամանաւ էր նա տպված Արարատի մէջ: Մեզ միայն կմնայ սպասել յուսալ և հեռուից տենչալ, որ Աերսիսեան Դպրոցի հոգաբարձութիւնն ևս անաշխառապէս և անկողմնակալ հայացքով քններ այդ նպատակը, այսուհետեւ նորընտիր տեսչի հետ նորա իրագործելուն նայեր, և մեր բերած ծրագրերը այժմէն իսկ սկսէր գործադրել:

Դեկտեմբերի 8, 1873 թ. Հայոց պատմական աշխատելի ժողով և երիտրուտ օրը:

Պատմեցի:

Յ. Գ. Այդպիսի գործադրութիւնը, մեր կարծիքով, կարող էր յաջող գնալ միայն այն ժամանակ, երբ յարգելի հոգաբարձուք աշխատանաց բաժանման սկզբունք ընդունէին՝ երկուաը նոցա միջեց ընտրվէին տեսչի օգնական իբրև հոգաբարձուք ուսումնակրթական բաժնի. երեքը՝ հոգաբարձուք ուսումնարանի ընդհանուր արդեանց և ելեմտից.

Երեքը՝ ուսումնարանի մասնաւոր տնտեսութեան, ուսումնարանի շէնքի, սեղանների, նստարանների և այլ բարեկարգութեան հոգաբարձուք, որոնց մէջ և կ'լինի դանձապահը: Մինը նոցանից ոռձկով հարստացր լինի, որ հոգաբարձութեան բոլոր բաժինների որոշումները և գործադրութեան տակ դնէ. մնացածները. մնացածները կարող էին այնուհետեւ երեք չ'երևցող հոգաբարձուք կոչովիլ, որք իրանց չ'գալովը արդէն օգուտ կ'բերէին: Այս բոլոր բաժինները առանձին կ'գործէին իրանց բաժնի սահմանի մէջ. ամիսը մի անգամ՝ հոգաբարձուաց ընդհանուր նիստ կ'լինէր. և ընդհանուր հաշուատեսութիւն կ'լինէր ամսական՝ նախագահի ներկայութեամբ: «Սախագահը միշտ պէտք է մասնակցէր ընդհանուր արդեանց և ելեմափյ հոգաբարձական բաժնին և երբեմն՝ ուսումնակրթական բաժնի մասնաւոր նիստերին և գործառնութեանցը: Ահա այս կերպի հոգաբարձական գործավարութիւնը պիտի բարձրացնէ մեր հոգաբարձութեանց նշանակութիւնը և հաստատէ ժողովրդի ուսումնարան կառաւարելու սկզբունքը և անխափաննելի արտօնութիւնը:

Գ Ա Ր Տ Ե Ա Լ Ե Կ Բ Կ Ի Կ

ԳԱՐԱՎԱԼԻ ԵՒ ԿՐԿԵՐ

ՎԵՐԺԵՎԵՏԵՏՆԵՐ ՊԵՏՐՈՍԵԼՈՒ

Digitized by srujanika@gmail.com

Կատ անդամ՝ ասուած և զրուած է թէ՛ մեր ազգը,
թէկ հին և ծեր, բայց այժմեան լուսաւորութեան և քա-
ղաքակրթութեան ասպարիզի մէջ դեռ ևս մանկիկ մի է:
Այո՛, երեխայ, այդ այժմն կը խոստովանի ամենայն ուշիմ
մտածող ։ այ: Սակայն երեխայական հասակն ևս ինքն ըստ
ինքեան կ'անցնի զանազան աստիճաններէ կամ շրջաններէ:
Արդ՝ ո՞ր շրջանի մէջ կրգտնուինք մենք: Բատ մեզ՝ համե-
մատութիւնը շատ յառաջ տարած՝ կամ սահմանէն հանած
չենք լինիլ, եթէ պատասխանէինք թէ՛ երեխայի նոր ատամը
նաբուսութեան շրջանի մէջ կը մտնենք: Եւ յիրաւի, մեր
ազգը այժմ՝ բաւականին մեծ նմանութիւն կը բերէ նոր ատամը
նածին երեխային: «Սայեցէք, դիտեցէք՝ որպիսի դժուարու-
թիւններ կ'կրէ խղճուկ երեխան իրեն մի ատամ՝ բումելիս,
ո՞րքան ցաւեր և տառապանք պիտի տանի մինչի նորա ոչչոց
և կորիչ ատամների յայտնուելը: Ամենայն ծնող իւր տեսա-
ծով և փորձով գիտէ թէ՛ ո՞րքան վտանգաւոր և երկիւղալի
է այդ ժամանակամիջոցը երեխայի բնական զարգացման՝ եթէ
մեծ զգուշութիւն և խոհեմութիւն գործ չը զրուի. մինչ զի
սովորութիւն եղած է երեխայի կեանքն անգամ ապահով չը
համարել Օրհասի ձեռքէն՝ քանի՛ որ գլխաւոր իտենտահնէրը
դուրս չեն ցայտել անվասա: Ինքը՝ երեխան այդ հասակի մէջ

մի անգօր և անգէտ կազմուածք կը ներկայացնէ, որ ոչ հասկանալ կարող է իւր ցաւերի պատճառները, ո՛չ կանոնաւոր կերպիւ յայտնել իւր ցաւերը և պիտոյքը, — լոկ լացն է նորա բոլոր հոգեկան կենաց արտայայտութիւնը: Միւս կողմանէ՝ ծնողք, ծծմարք կամ դայեակները և առհասարակ հասակաւոր շրջապատողքը առողջապահական դիտմամբ՝ ամենէն շատ այդ պատեհների մէջ սխալ կը դործեն: Մէկը՝ օրինակի համար, բոլոր հիւանդութեան պատճառը մօր կաթին տալով (թէե նա ո՛չ բնալուծել էր այդ կաթը և ո՛չ իսկ համը առել որպէս հարկն էր), չորացնել աղաղակում է մօր ծիծը և զանազան օտարօտի կամ անհարազատ և խորիժ դեղօրէքով կամի պնդացնել երեխայի ստամոքսը: ¹⁾ Միւսը՝ տեսնելով, որ երեխան ծանր տկարութեան ներքոյ անդադար լաւ լով կը նուազի, տուաջարկում է շինծու առօռուտներ և այլ շաքարախառն կաթեր իբրև մնունդ: Այսկերպ և շատերը, ո՞ր մէկը հաշուեմ, մինչեւ որ ոմանց յաջողի բարեպատեհ դիպուածով մստը դնել երեխայի բերանը և վերջապէս շօշափել բորբքած լընտերաց վերայի կոշտութիւնը: —,, Երեխան ատամ կ'հանէ,, զգոյշ լինինք. քանի՛ որ այս կարեոր գործողութիւնը կատարումն չէ առել, կազմուածքի միւս գործարանները խանգարմանէ չեն դադրիւ հարկաւոր է այստեղ իսկական մօր առողջարար մնունդը կանոնաւոր կերպիւ մատակարարուած, ազատ և մաքուր օդ, անխոնջ հսկողութիւն երեխայի բուսական կամ աճեցողական գորութեանց. քայլ առքյլ ուրեմն հետեւել բնութեան ուժերին և աշխատել նոցալաւագոյն ընթացք տալ — և ահա մեր երեխան պատրաստ կը լինի անդամագութիւններին միայն մեկ կարելի պիտի լինի մուշ և պատրաստել՝ մեր դեռ ևս թոյլ կազմուածքին իւրացնելու և ուղարկուածութեան այն լիուլի բարօյական նեւթը, որ մեր առաջին դրածունի արդի քաղաքակրթութիւնը, և որոյ ուղղակի մարսելը մեզ այժմ անկարելի է կամ շատ գործար:

Եթէ իսկոյն դործ դրուէին այդ և նման բարի խրապները, և յառաջ չը գային մի այլ նոր տեսակ հօգատարներ, որք կ'անուանին ապահուածութեան ¹⁾: Այդպիսիք բաւական է որ ատամի ձայն լսեն՝ ազգանը (քէլփէթին) ձեռին ազմուկ բարձրացրած իսկոյն կը վաղեն , բերէք՝ բերէք՝ ուղղակի ատամները դուրս քաշենք — պրծաւ գնացն: — Ի՞նչ ասես. . . :

Ահա այսպիսի դժուարութեանց, տառապանաց, և շփոթութեան մէջ է լինում մեր զանազան տեղերի հասարակութիւնը ամենայն մի իւր բարօյական զարդացմտն քայլը անելս: Այդ բացայայտ տեսնուեցաւ և կը տեսնուի մեր տաճկաբնակ աղգայնոց Աահմանազրութեան վերայ: Այժմս՝ մեր ժողովրդի մէջ՝ նորու բուռ, իսկական և իրական հարցորդութեանց համեմատ ուսունաց ծառալցու չգործուներն են, որ բունելու վրայ են և մեր կազմուածքի բոլոր ուժերը իւրեանց կը պահանջեն: Այդ չգործուներն միայն մեկ կարելի պիտի լինի մուշ և պատրաստել՝ մեր դեռ ևս թոյլ կազմուածքին իւրացնելու և ուղարկուածութեան այն լիուլի բարօյական նեւթը, որ մեր առաջին դրածունի արդի քաղաքակրթութիւնը, և որոյ ուղղակի մարսելը մեզ այժմ անկարելի է կամ շատ գործար:

Այս նոր զարգացման աստիճանի կարգէն է անտարակոյս մեր ամենակարեւոր խնդիրներէն մէկը, այն է՝ լսրժողութեան ¹⁾ ուղարկուածութեան ինդիքը: Սորա հետ կապուած կը տեսնենք և մը ուշ գոյին ուսունական ծրագրին և նշանակութեան որոշումը:

Ի՞նչպիսի ձայներ, ի՞նչպիսի առաջարկութիւններ չը լսուեցան արդեօք մեր օրագրաց և լրագրաց մէջ այս մասին; Ահենք չը կամինք այստեղ բոլոր մի առ մի յառաջ բերել — այդ մեզ շատ հեռու կարող էր տանել: Այլ ընդհանրապէս կ'ասենք, որ ցաւի տեղը և բունը չիմանալուց՝ առաջարկած դեղօրայք երբեմն անփեղի էին, երբեմն վասակար անդամ:

¹⁾ Քուպիտ դանտիստներ կամ դալաբներ:

¹⁾ Այս ժամանակ մեր մայրենի լեզուն դրականութեան եւ դաստիարակութեան անընդունակ հրաժարակողներին եմ ակնարկում այստեղ, եւ այդ թղթի դրսումնապիրելը մեր ուսանողաց համար ակնորդ քարոզպներին:

Խբրե օրինակ այս մօտերիցս՝ հարևանցի կերպիւ մեր ընթերցողի միտը ձգենք միայն „Մասնիկ“ 1869 թուակ. թերթերի մէջ տպած Ոտոսիացի մի պարոնի խորհրդածութիւնքը Թափլիզու ։ Աերսիսեան Դալրոցի վերաբերութեամբ։ Յօդուածի հեղինակը՝ ի շարս այլ եզրակացութեանց՝ վերջ ՚ի վերջոց գալիս է հետեւեալին թէ՝ ։ Աերսիսեան Դալրոցը մի հիմնաւոր ծրագիր չունի, մի որոշեալ նպատակ այժմն չէ երեցնում։ Հետեւբար թշուառ դրութեան մէջ է։ Այս թերութեան և անորոշութեան զլխաւոր պատճառն ևս՝ Դալրոցը ։ Նոգեւոր իրաւասութեան տակ լինելն է կարծում։ Առաջին պարբերութեան դէմ դեռ չը խօսինք. գալով երկրորդին՝ կը հարցնէնք. Նոգեւոր իրաւասութիւնը ինքն ըստ ինքեան ի՞նչ կը թելագրէ, եթէ ո՞չ այն թէ՝ Ուսումնարանը ժողովրդի համար կրթեալ հոգեւորականներ և կրթեալ վարժապետներ պատրաստէր։ Մեր այժմեան դրութեան մէջ՝ ամենայն խոհեմ մարդ մի և նոյն կերպիւ այս երկու գործը անրաժան պիտի համարէ. այսինքն՝ կրթեալ վարժապետացուն միւնոյն ժամանակ քահանայական պաշտօն վարելու կարող պէտքէ լինի. իսկ կրթեալ քահանայն՝ այժմեան մտքով վարժապետական գործին ընդունակ:—Եթէ ուրեմն՝ Դալրոցի տեսչութիւնը տեսնէր իրաւի ազգի այժմեան ընդհանրական կարօտը, և նպատակ դնելով նախ և առաջ վերը լիշած մոքով ժողովրդութեան վարժապետական մտքութեան մուտքութիւնը ուսման ծրագիրը՝ լուսաւորեալ տէրութեանց միջնակարգ ուսումնարանաց չափով այնքան լայնացնէր, որ այգտեղ աւարտողները փոքր առփոքր կարողանային ուղարկուիլ Եւրոպայ՝ ուղղակի վարժապետական մտնելու (մացողները որպէս լաւ պատրաստուած վարժապետացուք, ՚ի հարկէ, ազգի մէջ անհետ չէին կորչելու թէ՝ իբրև քահանաներ և թէ՝ մասամբ այլ ասպարէզների մէջ): Նարցնում ենք գարձեալ՝ այսպիսի մի

օգտաւէտ նպատակի իրագործելուն պիտի ընդիմանա՞ր ։ Նոգեւոր—իշխանութիւնը, և կամ նորա իրաւասութեան թելազրութենէն դո՞ւրս էր այդ. քա՛ւ լիցի: Պարոնը, երևի, մոռանում է, որ եթէ ժողովրդի առաջաւոր անձինք՝ ինքեանք իւրեանց ժողովրդի բուն կարօտը երկրորդականէն ջոգել չեմանան՝ մինակ հոգեւորի ինխիսիատիվը փոքր կարող է օգնել. զորօրինակ, Ոտոսիացի պարոնին անյայտ չը պէտքէ լինի, որ մի քանի տարի առաջ երկու թէ՝ երեք երիտասարդ ։ Վաֆէնտեանցի՝ Դալրոցին կտակած գումարով ուղարկուեցին Եւրոպա ։ Նորանում ենք՝ հոգեւոր իրաւասութիւնն էր մեղաւոր, որ նոցա վերայ անհրաժեշտ պարտք չը զրուեցաւ վարժապետական գիտութեան և արհետի մէջ կատարելագործուելու և մի որոշեալ ժամանակամիջոց ։ Դալրոցին ծառայելու. կարծենք նոյնպէս թէ՝ հանգուցելոյ կտակի ոգւյու դէմ ևս չէր այդ: Այստեղ մենք ամենեւին դիտաւորութիւն չունինք կտակակատարներին կամ այս և այն մասնաւոր անձին ակնարկելու որովհետեւ մեր ընդհանուր գործերի մէջ որոշեալ գիտակցութիւն չունենալը շատերին պակասութիւնն է: Մեր ասելն այսքանն է թէ՝ երբ այսպիսի՝ հասարակ պարագաների մէջ անգամ (ուր թէ՝ կարօտութիւնը, թէ՝ այդ ըստ չափու լրացնելու կերպը ինքն ըստ ինքեանց բաց յայտնի էին) մեր Թափլիզու առաջնաւոր անձինք կը դժուարանան մինչանակեալ նպատակ ցոյց տալ: Ուրեմն՝ . . . Ուրեմն՝ պ. Ոտոսիացւոյ կողմանէ՝ Դալրոցի թշուառութեան մեղադրանքը առանց փաստերի Նոգեւոր իրաւասութեան վրայ ձգելը՝ ի՞նչ միաք ունի, եթէ ո՛ միակ վայրաբանութիւն, վասակար բծախընդրութիւն. երանի չէր լինի եթէ մենք Նոգեւոր իրաւասութեան շրջանի մէջ եղածը միայն ըստ կարդին կարողանայինք մշակել, այդ ևս մեզ բաւական էր:

Ենքը՝ պ. Ուստիացին, որ գուցէ մեր առաջնաւորնեւ ըից մինն է, ուր է նորա առաջարկած որոշեալ նպատակը։ Չըլինի՛ թէ՝ պարոնը, դրաւութելով իւր բերած մասնաւոր օրինակներէն (պ. պ. Պազաղեանի, Թիւսիկեանի, Արամեանի Կիւչարեանցների) կամի Կերսիսեան Պալրոցը Ախտա՛ճնարանի նման մի ուսումնարանի փոխարկած տեսնելը որպէս զի աւարտող աշակերտները առանց դժուարութեանց Ճեճարանի 4-րդ դասատունը ընդունուեին։ Եթէ այդքան տեղն է հասել լաւ չէր լինի՛ Կերսիսեան Պալրոցը ուղղակի գաւառական ուսումնարան¹⁾ շնէինք. . . ահա՛ ձեզ հիանալի իրեաց պատուելի՛ հոգաբարձուք Կերսիսեան Պալրոցի՛. . . ։ Մեզ կը մնայ միայն ցաւիլ որ „Պատիկ“ պէս պատուական լրագրի մէջ, ուր սովոր էինք՝ երեմն իսկական և ազգի բուն յառաջադիմութեան ծառայող գրուածներ կարգալ տպած գտանք յիշեալ պ. Ուստիացայ ծանծաղամիտ յօդուածն ևս։ Ի հարկէ այդ դիպուածով Մասիփ խմբագրութիւնը անգունելին շատ հեռու ենք, նախ՝ որ նա լաւ տեղեակ չէր լինի Թիվլեզու Պալրոցի հանդամանքներին, և երկրորդ՝ իրը ուրիշներէն պարզելու նպատակաւ այդ կարող էր տպել։

Վարժապետներ պատրաստելոյ բուն խնդրոյ մասին եղած զանաղան շփոթաբանութեանց օրինակները այստեղ բերելը դարձեալ կը երկարէր։ Այսքանո կ'ասենք, որ ինքնահրաւէր ատամնաքաղները այս խնդրոյ մէջ ևս պակաս չ'են։ Ահա՛ մինչեւ ց'այժմ լսածներիս բովանդակութիւնը կարծառօտ. . . Եւրոպայում վարժապետական դպրոցներ կան, ուր դաստիարակուում են կատարեալ կրթութեամբ ուսուցիչներ։ Աւստի՛. . . Պարեմն. . . ուղարկե՞նք երիտասարդներ Ազգի դումարով ուղ-

¹⁾ Ուսդզնոյէ ուշիցչէ։

ղակի այդ դպրոցները։ Այս առաջարկութիւնը հետևողաբար կամ տրամադանօրէն արած կը թուի. և մենք մի բան չէինք ունենալ սորա դէմ ասելու, եթէ միայն մասնաւոր դէ պեղերի վերաբերէր։

Օրինակ՝ եթէ այս կամ այն բարեգործ աղդայինք՝ ցանկալով իւրեանց բարեգործութեամբ ո՛չ միայն երկու երեք անհատներ Ազգի մէջ բարւոքել, այլ՝ դոցա միջոցաւ մեր ընդհանրութեան որոշակի կարօտը մասամբ և եթ լրացնել, — կը հրաւիրեն այդ նպատակին ձեռնտու երիտասարդներ Եւրոպա՝ դաստիարակութեան բարձր ուսման մէջ կատարելագործուելու, փառք և պատիւ այդպիսեաց։ Եւ մենք ամէնս, 'ի հարկէ բրդոր պէտքէ կարգանք միւսներին ևս հետեւ դոցա, որովհետեւ դոքա Ազգի մէջ մեծագործութեան սկիզբն են դնում։ Սակայն ըս պիտի մոռնանք, որ այդպիսիներ՝ հազարաւորներից մինը — երկուսը կը պատահին. որովհետեւ մասնաւորների համար իրաւի դորձը այնքան հեշտ չէ։ Այսքանը միայն միտքերենք թէ՝ մեր փոքր 'ի շատէ ձեռնտու համարուած երիտասարդներին Եւրոպայի լուսաւորեալ քաղաքները ուղարկելով նախ և յառաջ՝ գեռ ո՛րքան հոգատարութիւն պէտք կը լինի՝ նոցա ընդհանուր պարգայնան, նայենի և մի երկու հարկաւոր օտար լեպուաց Եւրոպալինչը լրացնելու համար միայն. . . ։

Եւ դարձեալ՝ Կերսիսեան Պալրոցը շատ անգամ այս կամ այն դիտութեան ուսուցչե, գլխաւոր վարժապետի կամ տեսչե պակասութիւն է կրել։ Փոխանակ՝ համալսարաններում աւարտած (ըստ մեծի մասին դաստիարակութեան անտեղեակ և գլխաւորապէս իւրեանց մասնաւոր գործերին զբաղուած) պարոնայց շնորհներին (մուննաթից) սպասելու. և երբեմն այդ շնորհները բաւականին մեծ գումարով ձեռք բերելու, անտարակոյս, վերջի տարիների հոգաբարձութիւնքը առաւել տնտեսաբար և հեռատեսութեամբ վարուած կը լինէին, եթէ Պա-

բոցի գումարներէն մաս մի յետ ձգելով տնօրինէին՝ դէմ երկու տարին մի անգամ այս կամ այն յատուկ ձեռնառու երիտասարդը յԵւրոպա ուղարկելու. որպէս զի սոքա արդի գաստիարակութեան և վարժապետական արհեստին հմտանալով՝ գային իւրեանց սնուցանոլ Դպրոցին մի ժամանակամիջոց համեմատաբար աժան ծառայէին, իրեւ վճարումն պարտուց: Այս կերպ թէ և տակաւ առ տակաւ՝ մինչ ց' այժմ Դպրոցը սոքի կանգնած կը լինէր: Ի հարկէ, այժմս մանաւանդ առաւել վստահութեամբ այդպիսի բարեացառիթ և բարեբեր ձեռնարկութեանց յոյսեր պէտքէ ունենանք ներկայիս մեծաջան տեսչի հեռատեսութենէն և մեծապ. հոգաբարձուաց խոհեմութենէն: ¹⁾

Ասացինք՝ այսպիսի մասնաւոր դէպքերի մէջ այդ յորդորը և առաջարկութիւնը ունի տեղի. բայց երր այդպիսի առաջարկութեամբ մեզ պէտքէ ասեն թէ՝ մեր գաւառները, մեր փոքրիկ քաղաքները տղիտութեան խաւարի մէջ, նախապաշարմանց ձեռէն անսաելի զրկանաց և վտանգների տակ կ'հեծեն և կը հառաջեն, — սոցա ահա՝ պէտք են կրթեալ ուսուցիչներ, որք ժողովրդի կեանքին սերտ կապերով կապուած, նորա թերութիւնքը և պակասութիւնքը լաւ ձանաշելով գիտենան յարմար կերպին նորա վէրքերը մաքրել և հարազատ սպեղանիք դնել. այսպիսի ուսուցիչներով միայն մեր գոլրոցների հարիւրաւոր աշակերտները սակաւ մի լոցի երես պիտի տեսնեն և այլն: Այստեղ խօսքը՝ ժողովրդական հրեւեալ ուսուցիչներ պատրաստելու ամբողջ եւանակներ (սիստեմայի) վրայ է: Եւ ե՛ր՝ փոխանակ խոհեմութեամբ իրական միջոցներ որոնելու՝ այդ ամենատեղակի նպատակի իրադրծութեան համար միակ հնար

1) Ցաւով սրտի պէտքէ խոստովանինք հրապարակաւ, որ մեր այն ժամանակայ յոյսերը ՚ի վերեւ ելան, տեսնենք նոր հոգաբարձուներին եւ տեսնին.

մեզ ցոյց են տալիք մեր ամեն հայշներում քննութէ (Դպրոցական) հուագուէլը և մեր երիտասարդները ուղղակի Եւրոպայ ուղարկելը, — այն ժամանակ՝ չենք կարող այդ առաջարկութեան մէջ մեծ խրամատ մի չը դիտել. այս՝ եզրափակութեան մի ուսումնի, որ վերը յիշած ատամնաբոցմների երեխայի դեռ չը բուսած կաթնատամները աղցանով (քէլփէթով) դուրս քաշելէն պակաս չէ:

Յիրաւի, եթէ մի փոքր քննութեան տակ ձգենք այդ կերպ եղած առաջարկութիւնը՝ պիտի տեսնենք, որ մեր հրապարակախօսները՝ կամ ամենեին չը կամին ճանաչել մեր այժմեան երիտասարդութեան կազմութիւնը, չը դիտեն ևս թէ՝ ի՞նչպիսի յատկութիւնք և պատրաստութիւն պիտի ունենայ մի վարժապետական դպրոց մտնող հայրը — կամ՝ Եւրոպիոյ ընտառիեալ քաղաքաց վարժապետական ուսումնարանները իրանց կը թուի մի ներկարարի կարաս, որի մէջ ամեն հայ երիտասարդի ականջներէն բունած՝ մի երկու անգամ ընկղունք թէ չէ, ահա՝ մեզ համար պատրաստ կը լինի ներկուած հայ ուսուցիչը: Հարցանում ենք մեր հրապարակախօսներին՝ որպիսի՝ երիտասարդութիւնից պիտի քաղեն իւրեանց ուժերը Եւրոպա ուղարկելու վարժապետացուքը. համալսարանների, Ճեմարանների, կամ զանազան տէրութեանց միջնակարգ ուսումնարանների ուսանողներէն արդեօք. :

Այժմ ամենայն մտախոհ մարդ տեսնում է թէ՝ այդ տեղերից տարիներով պիտի հայ վարժապետացուներ որոնեն որ մինին կամ միւսին գտնեա, այն ևս իրեւ մի յաջողակ և պատահական դիպուած: Այդ գժուարութիւնը շատերը բնական կը տեսնեն մանաւանդ տնտեսական հայեացքով միտ դարձնելով այն զօրաւոր պայմաններին, որոնց աղգեցութեան տակ մեր երիտասարդութիւնը ստիպուած է այս և ո՛չ այն ապրուստի ճանապարհներ որոնել և երբեմն շըջամոլիկ թափառել. . . :



Աեր ազգային գպրոցներէն նոցա այժմեան դրութեան մէջ նոյնպէս չենք կարող Խւրոպիոյ լուսաւորեալ քաղաքաց վարժապետական ուսումնարանաց համապատասխան աշակերտներ յուսալ: Ուրեմն՝ մեզ կը մնայ պարոնայց ընդարձակ առաջարկութեանը հետեւեալ առածով պատասխանել: Այդէ ուսումնական երազու երկարացը բարեկարգ ու աշխատավոր համար՝ նախ և յահաջ պէտք պատրաստում երկարացը անհնալ: Յուսով ենք թէ՝ մեր ընթերցողին արդէն պարզ է մեր միտքը. ըստ երկարինք ուրեմն թէ՝ ո՞րպիսի երիտասարդների կարօտութիւն կայ: Միայն այժմ իրը մէկանց ակներեւ կացուցանելց համար՝ մեր ամէն լուսաւորուած (համալսարաններում գիմնազիոններում ուսում առաջ և ծառայող) ընթերցողին կը հրաւիրենք՝ իւր փափուկ բազմոցի վրայէն և իւր զարդարուն սենեկէն մի օր, մի ժամ իւրեան փոխադրել մտքով՝ Աշու գաւառը, Աշե, Աշղէշ, Կարս, Ագուլիս, Գիւմրի և այլն, այն ևս՝ ժողովրդական վարժապետի պաշտօնով հանգերձ և սորա բոլոր պարագայիւք: Այս պիսի փոխարկութեան մէջ իսկոյն պիտի զբայինք ամենայն լըծութեամբ թէ՝ ի՞նչ է մեզ պակաս և ի՞նչ հարկաւոր. թէ՝ բացի զարգացումը՝ ո՞րպիսի նորանոր զբացմունքների, սովորութեանց, տրամադրութեանց պիտի կարօտէինք ամէն մի տեղի ժողովրդի դրութեան և պիտոյից համեմատ, թէ՝ ո՞րքան մասնաւոր տեղեկութիւնք պիտի ունենայինք մի քանի զիտութեանց մէջ, մասնաւանդ մեր աշխարհագրութեան և պատմութեան (վերջին դարերը առաւելապէս): Պիտի զբայինք անշուշտ թէ՝ այդպիսի՝ և նման տեղերում առանց վհասութեան և թուլացուցիչ յուսաբեկութեան միշտ գործունեայ ուսուցիչ լինելու համար՝ եթէ ոչ Պեստալոցցու հանձարը (որ շատ հազուագիւտ է, 'ի հարկէ) զոնեա՛ նորա՝ ժողովրդի մէջ տպիւրու ուժը և կարողութիւնը պիտի ունենայինք: Սորա համար արտասահմանում կը թութիւնը առնեներս դեռ շատ

փոքր պիտի լինէր. այլ՝ մինչեւ արտասահմանը մեր մանկական հասակը այդ իսկ ժողովրդոց մէջ պիտի անցուցած լինէինք, մեր պատանեկութիւնը այդպիսի՝ նպատակի շատ մի յարմարուած պէտք է լինէր:

♦արիշտոր է ուրեմն նախ և յառաջ՝ հայրէնիքում վարժապետանէր (կանգիդաթներ վարժապետութեան) պատրաստէլ: Այս մտքով վարժապետացուներ պատրաստելով մենք միևնոցն ժամանակը քահանայացուներ կ'ունենանք. որովհետեւ այդ երկու դասերը մեր այժմեան դրութեան մէջ բոլորովին միակերպ պատրաստական կրթութիւն պիտի ստանան, որ կարողանան իւրեանց բուն նշանակութեանը ծառայել և իրար օգնական լինիլ կեանքի մէջ:

Ահա՝ այս գործին պէտք է ձգտին այժմն մեր ուժերը. . . ահա այս մասին կ'աղերսեմք մանաւանդ մեր Տեսուչներին և ♦ողաբարձուներին ուշի ուշով խորհել. . . և վճռողական ընթացք բռնել:

Անք մեր կողմանէ՝ միանգամայն համոզուած ենք՝ թէ քանի մենք չունինք զանազան մեր հարուստ կեդրոններում՝ գէթ երկու-երեք հիմնաւոր հաստատութիւնք՝ վերը յիշած մտքով՝ Աղդային վարժապետացունէր պատրաստէլու որոշչուլ նպաստական՝ մեր մէջ այժմեան ուսուցիչների (նոյնպէս և կրթեալ քահանաների) յաճախիլը անկարելի է, հետեւաբար՝ մեր հարստահարեալ, եղկելի ժողովրդի փրկարար կրթութիւնը և լուսաւորութիւնը պիտի մնայ երազական:

Այսպիսի հաստատութիւնք մեր այժմեան պայմանների մէջ ունենալը միթէ ցնորք է. չէ՞ որ ըստ մասին կան: Այս ևն՝ Կերսիսեան Պալոցը, Պօլսը, Վուպար-Շահնազարեան վարժարանը: Այս հնարները այնքան սուղ չեն՝ որ իւրեանց այժմեան ուսման ծրագիրը՝ մեր յետագյում բերած պրոգրամներին կամ նմաններին հասցնելը՝ մեր ուժերէն վեր համա-

ըէինք: թող միայն համոզունք լիներ մեր մէջ և ոչ մտաց տատանումն՝ մեր զլիսաւոր կարօտութիւնը երկրորդականէն հաստատ որոշել իմանայինք, — գործը ինքն ըստ ինքեան այնքան գժուարութիւններ չը պիտի ներկայացնէր:

Սոցա կարող էին հետեւիլ Աներոպեան վարժարանը և մասամբ Առուրատեան վարժարանը, եթէ այս վերջինի տնօրէնքը թողլով մասնաւոր ձգտումներ՝ ազգի ընդհանրութեան բուն օգտին ծառայելու տրամադրուէին և փոխազրէին իրանց վարժարանը Պոլիս կամ Աստին¹⁾:

Արը յիշեալ ուսումնարաններէն, արդեամբ վաւերացնէ ազգի առաջ այդպիսի որոշեալ նպատակի դիմելը. նոյն և առաջինը պիտի վայելէ ազգի իրական սէրը և համակրութիւնը: Հաւատացած ենք թէ՝ մեր հասարակութեանց կողմանէ սակաւ ժամանակի մէջ նուէրները այդպիսի հաստատութեանց այնքան պիտի առատանային, որ էտքէ լիներ բարեցանի անընդհանուր էնթրիւ աւարտածնէրին փոքր առ փոքր Արուրայ ռոշտիւն են²⁾:

1) Բայց աւան այնքան վստահութիւններս աւերուած է վերապահաւութիւններ և առաջարկութիւններ մասի երկարամեայ արարքներէն, մանաւանդ այդ վարժարանի նկատմամբ, որ կը կասկածենք թէ, դրա ընդունակ լինէին մի առողջ ազգային գաղափարի ծառայելու և թողնէին իսպատ, խախուտ եւ փիփած սկզբանց տակ դեղիւել և խարխափել: Ո՞ զիտէ կամ կ'երաշխաւորէ թէ, այդ վարժարանը՝ ի վարուց արդէն շեղուած գորով կոտակարարի զիսաւոր որոշումներէն, փոխադրուելով այժմ Հայաստանի իսկ ծոցի մէջ, խարդախութեանց սերմանայ չը զանայ. Եղու կը Մուրատին, կրկննը Հայր թէոդորեանի խօսքը:

2) Այս տեղ հարեւանցի կրկնենք այն շատերին յայտնի միտքը թէ, շատ մի ազգային գումարներ, եկեղեցական գումարներ, կտակ և ալ գումարներ մեր մէջ անհնտ եւ անպատճ կորուսուել են եւ վասնուել: Եւ եթէ շատ անզամ գորիկ ենք մնացել սպասելի նուիրատուութիւններէ եւ կտակներէ, ոորա մի պատճան եւս այն է եղել, որ որոշեալ գործունէութեան կեզրոններ կամ հաստատութիւնք չենք ունեցել. ունեցածներս էլ ժողովրդի վստահութիւնը փոքր են աշխատել դրաւելու:

Այս կերպ վարժապետացու պատրաստեալ երիտասարդաներէն՝ ըստութիւններէն միայն Արուպայ ուղարկելով հաւաստեօք պիտի տեսնէինք թէ՝ ազգի գումարը իւր ամենայն տոկոսով և շահերովը գործ դրինք: Ազգի նուիրական գումարները վայր ի վերոյ կամ կիսատ շահելը յամենայն դէսու մեղք է, ո՞ւ մնայ՝ վարժապետներ պատրաստելոյ կարեոր խնդրոյ մէջ:

Երբ իսկապէս կրթեալ վարժապետներ մեր մէջ բազմանային, սոցանից պիտի գուրս գային այնպիսիք, որ ինքեաննք ընդունակ լինէին՝ այժմեան մոքով մանկավարժներ, նորահետ անբաժան և կրթեալ քահանաներ մեր յիշած ուսումնարանների աշակերտներէն պատրաստել ուղղակի հայրենիքում: Այս կերպ՝ մէկ կողմանէ մեր ծախսը փոքր առ փոքր պիտի սակաւէր, միւս կողմանէ՝ մի ողկոյզը բազմաթիւ պտուղներ իւր վերայ պիտի կրէր:

Մի բացատրութիւն ևս: Գուցէ մեղ ասեն թէ՝ 1) վարժապետացուի և քահանայացուի կրթութիւնը բոլորսվին միացած՝ անցածող խառնուրդ մի կարող է գուրս գալ՝ և եթէ այդ ևս չը լինէր. 2) մի՞թէ մեր որդիքը՝ ամենը՝ վարժապետներ և քահանաներ պիտի դառնան, որ միակ այդ նպատակին ծառայեցնենք մեր զլիսաւոր ազգային ուսումնարանքը:

Այս դէմ մանրամասնօրէն խօսելով ներկայ յօդուածիս սահմանէն գուրս ելած պիտի լինէինք: Առաջի պարբերութեան նկատմամբ կարճառօտ միայն ասենք, թէ՝ յետագայում երկու տեղ բերուած վարժապետացուաց ուսման առարկայից զլիսակարգութենէն ոչ մինչ էտէնէն, որ կարելի լինէր աւելորդ կամ շուայլական համարել կրթեալ հայ քահանայի համար, բացի մի Արուպական լեզուն (վերջի դասաւներում) և մասամբ մարմնամարզութիւնը (այն ևս իբրև զիջումն մեր կողմանէ). աւելցնելու այլ ևս ոչինչ չենք գտնում, բացի ժամանակաւենը (որը ուսումնարանէն գուրս է և որին ընտելա-

նալու համար մի տարի մի եկեղեցում ծառայելը շատ և շատ բաւական պիտի լինի): Դառնանք օտար ազգաց նայենք: Ամսնաւոր վարժապետական ուսումնարաններով չքաւոր ամեն մի ազգ՝ ժողովրդական վարժապետացուներ ըստ մեծի մասին քաղում է իւր հոգեոր դպրոցներէն և ոչ աշխարհական միջնակարգ ուսումնարաններէն. հոգեոր դպրոցների մէջ՝ թէ ընդհանուր կրթութեան սահմանները լայնացնելավ՝ թէ վարժապետականութեան տարրեր մացնելով: ¹⁾ Իսկ մեզ ուրիշ կերպ մտածել և գործելն անգամ անկարելի պիտի համարենք. մանաւանդ որ այդ կերպն է մեզ ամենակարեւորը և ամենաօգտաւետը: Այս կերպ՝ Աւրուսեան Պարոցի որոշուելը և փրկութեանը այս էրու նպատակն ուրիշ մացնելում և որդեամբ ուցած էր կրթութեան է, և ոչ նորանոր նպատակներ ստեղծելը: Այսպէս միայն դպրոցը պիտի ազատուի նորանոր անձունի խառնուրդներէ, և ոչ թէ դորանով անցածող խառնուրդ լինի:

Գալով երկրորդ պարբերութեանը, օրինակով խօսինք: Երբ մի մարդ հասարակ հացի կարօտութիւն կ'կրէ և իւր ունեցած հնարները հազեւ կը հասնին դորա գնելուն, նա հարկաւ իւղ և շաքարեղէնի ձեռք բերելը պէտք է թողնի պատահական դէպքերի: Այս մեր վճռողական պատասխանը. ահա՝ զիջողականն ես. թո՞ղ ընթերցողը չը մոռնայ, որ վարժապետացու կամ քահանայացու պատրաստելով մի ուսումնարան մասնակիթական (սպեսիալ) ուսումնարան չ'է դառնալու սույն հոգեու այլ՝ դարձեալ կարող է մնալ հանրակրթական կամ համազգային շրջանի մէջ: Աշակերտները այդպիսի ուսումնարանի մէջ քաջ պիտի տեղեկանան բոլոր այն գիտութեանց, որ անհրաժեշտ կը համարուին այժմն ամեն լուսաւորեալ մար-

¹⁾) Ինչպէս այդ ցոյց է տալի Ռուսաստանի լուսաւորութեան պաշտօնէի դրաֆ Տօլսովի կարգադրութիւնը:

դոյ համար: Օանապանութիւնն այս է միայն թէ՝ այդ գիտութիւնքը այն գիտմամբ, այն կերպով՝ այն մեթոդայով պիտի հաղորդուին, որ ապագայ վարժապետին կամ քահանային ևս առաւել նիւթ և հնար տան նոցա գործունէութեան մէջ. կամ այլ խօսքով՝ ո'րպէս այդ պիտի պահանջէր ժողովրդի կարօտութիւնը և գրութիւնը: Այս կերպ՝ աւարտած աշակերտների մի մասը եթէ ընդունակ չը լինին քահանայ կամ վարժապետ դառնալու, մեր միւս ասպարէզների մէջ դարձեալ առաւել օգուտով պիտի գործեն քան թէ այժմ՝ թէ՝ իրեւ վաճառական, թէ՝ իրեւ գրագէտ և այն:

Արդարեւ թագաւորական ծառայութեան մանելու կամ խսկոյն արհեստաւոր դառնալու պիտի գժուարանային. բայց այդպիսի գիտմանց այնքան կարօտութիւն չկայ, հնար ևս չ'ունենք: Ամսնաւանդ որ բարեխնամ տէրութեանց այդ նպատակաւ հիմնած ուսումնարանների գոները բաց են ցանկացողաց համար: Այս հայեցքէն նայելով՝ Աւրախեան դպրոցին՝ կը տեսնենք, որ սա մեծամեծ փոփոխութեանց ենթարկուելու կարօտութիւն չունի, ինչպէս շատերը կ'աղաղակեն: Այլ՝ դարձեալ պէտք նաև Հռոմեաց Պարոց (ի հարկէ ոչ վանական կրօնաւորներ պատրաստող ¹⁾). զանազան ժողովական շրջաններում իւր ունեցած չփոռաներէն ոչ մէջին չետք չը պիտի վերցնե.

¹⁾) Այդպիսի մասնակրթական ուղղակի կրօնաւորներ կամ հոգեւորականներ, (ուսումնարանի մէջ զեռ պատրաստ ժամասացութեան եւ բեմական բարոզատութեան,) ասունենք այդպիսի ուսումնարան ամենայն յաջողակութեամբ կարող էր լինել մեզ համար Ս. Էջմիածնայ նորակառոյց վարժարանը, որոյ յառաջադիմութեանը այդ կողմանէ ի բոլոր սրտէ կը ցանկայիք, որովհետեւ Էջմիածնայ պայմանները բաւականին ժենասու կարող են լինի այդպիսի մի չողեւոր ձեմարանի. իսկ հերսիսեան դպրոցը հետեւելով այդպիսի մասնաւոր նպատակի, չը պիտի հասնի դորան, ինչպէս վործն էլ ցոյց է տուել եւ պիտի մնայ որպէս եղել է ո՛չ այս եւ ո՛չ այն: *)

*.) Այս մասին մեր այժմեան կարծիքը փոքր ինչ տարբեր է, տե՛ս թօշիւրիս վերջի յաւելուածը այս ծանօթութեան դէմ:

այնէ՝ պահանջներ, վարժապետներ, և մասմբ առաջարկուի՝ աղքե լուսարդութեան անդամներ պարագանելը։ Այս նպատակները ըստ կարելուալեան անընդան մեղյանէլ պետք է։ և ուստ գործադաշտն ապէս իրադրելու էնդրանն է վարժապետացուաց (վարժապետան աւմբնարդների չանտեւալուց) սաման ծրագիր ընդունելը։ Այսքանն է մայն այժմն հարկաւոր։ Յեպագայում էլ նոր Դարպաց վարչութեան էրախանէ՝ ամենայն էնդր աշխատել իւր պարագանեած աշակերտների համար առանձին արագութեաններ առանձան՝ մեր երկու պարի օրինակ՝ ծառայելով այս էամբ այս ենդրացում, առանց լուսեամբ հահանայ չետառը ըստելու և ժողովրդի մէջ բարձր աել բանելու։ Այս էրախանէ գործարդներ չետառ բանելու (չետառ բարձր պարեսաբար շահել և յէս չգել) աշակերտներեց ընդունածներն, ենչպէս վէրը տասցին, Երրորդ՝ վարժապետաւթեան սաման սաշարիւլու։

Հայ ի՞նչ կէտի է հասել այժմ հայոց մէջ վարժապետաներ պատրաստելոյ խնդիրը։ Եւ կարծենք թէ՝ այդ կերպ խնդիրը տեսական շրջանէն գործնական շրջանի մէջ կը մտնի։ Մինչեւ հիմայ ըստ մեծի մասին մեզ ասում էին՝ „Եւրոպայում գեղեցիկ գործաններ կը շնորին, որոնցով տասնապատիկ առաւել հեշտութեամբ հող կարելի է վարել. մե՛զ ևս հարկաւոր են Եւրոպական գործաններ։“ Այժմ ասում ենք. — այդ գործանները մեր հողի կամ գետնի խաւերին (զաթերին) շատ յարմարացրած պէտք է լինին. եթէ ո՛չ գոքավեր ընկած կը մնան այս և այն հարուստի մօտ կամ գորշէ գործածուին միայն պարսէնէրի բաժինները փորելու կամ կասելու։ Իսկ մեր խոպան ազարակների համար հեշտ փորող և վարող գործաններ ձեռք բերելու՝ այս կամ այդ իրական հնարներն է այժմս մեր մէջ տեսնուում։

Այսպիսի հայեացքի կէտէ նայողներ մեզանում այժմն բարեաղբարար բազմանում են։ Իբրև օրինակ՝ մատնացոյց լինք պ. Ա. Միանսարեանի, Քնար Հայկանի վերջաբարականութիւնը, իսկ մեր բարբառի համար Փ. Պալասանեանի աշխարհաբարի քերականութիւնը, որ շուտով լոյս կ'տեսնի։

Նութեան 5—13 երեսներին, որոյ գլխաւոր գրութեանցը մենք միանգամայն համամիտ ենք և յատուկ կը ցանկայինք որ յիշած երեսները զատուելով միւս շատ և շատ քնարերգական ապիտոյ ներից և այդ կերպ առաւել որոշութիւն ստացած՝ Արարատի մէջ տպուէին կրկին՝ սորա բազմաթիւ ընթերցողաց համար։ Յուսով ենք թէ՝ պ. Ա. Միանսարեանը ընդդէմ չը լինէր սորան, մանաւանդ որ, „Քնար Հայկանի իւր գնովը մեր ժողովրդեան շատ մասին իրաւի անմատչելի է։“¹⁾ Այստեղ մեր յօդուածի լրութեան համար այդ երեսներէն բերենք միայն Կերսիսեան դպրոցին և սորա չափ հնար ունեցող ուսումնարաններին առաջարկուած ուսման ծրագիրը՝ մեր նկատողութիւններով և յաւելուածով։

1) „Այս վարժարաններում իւրեանց ուսումն աւարտած, աշակերտներից պիտոյէ ընտրել ո՛ր և իցէ թուով (որքան զրամագլուխը կը թոյլ տայ), ամենընդունակ, կազմուածքով նքաջառողջ աղնիւ և ազգաէր աշակերտներ։ Պիտոյ է որ այսպիսի աշակերտները քաջահմուտ տեղեակ լինին Հայոց զրաբար լեզուին, այն երկրի աշխարհաբարին։ Վաւելցնենք մենք՝ ո՛չ միայն այն երկրի, այլ մեր ամենազլխաւոր բարբառներին, մանաւանդ այժմեան մեր արևմտեան բարբառին, որոյ գերազանցումը օր ըստ օրէ նկատելի է գառնում։ Ա արժապետական ձեռնարկներից այս տեղ առաջին տեղը պիտի ունենայ Հ. Այտընեանի Քնարական քերականութիւնը, իսկ մեր բարբառի համար Փ. Պալասանեանի աշխարհաբարի քերականութիւնը, որ շուտով լոյս կ'տեսնի։

2) „Այս հին և նոր ընտիր հեղինակների գրուածոց. Առվակ. Խորին. Եղիշէի, Ղազ. Փարպ. Ագաթանդ. Ստեփան Օրբելեան. Յովհան. Կաթ. Փաւստոսի, Ալրդանայ,

¹⁾ Ապացոյց, որ աշխատասիրողը յետոյ գինը 4 ո. շինեց։

„Եռաքելի, Սմբատայ և Վիրակ. Գանձակեցւոյ պատմազրու
„թեանցը: Սոցանից թարգմանուածներին այն օտար լեզու
„ների, որք ծանօթ էին աշակերտաց, մանաւանդ այդ թարգ-
„մանութեանց՝ ծանօթութեանցը և մեկնութեանցը. զա-
„նազան նոր ժամանակադրութեանցը, որք տպուած են մեր
„ամսագիրներում: զորորինակ. Յովսէփ. անուանեալ Կաթ.
„Երջութ. Մանուել Վարդ. Վիւմիւշանցւոյ, Կոռնչ ամ-
„սագրումը և այլն և այլն»:

Եստեղ մի փոքր զգուշութեան կը հրաւիրենք պ. Մի-
անսարեանին:

Թա՞ղ չը մոռնանք թէ՝ վարժապետացու և քահանայա-
ցու դաստիարակել և հնախօս—պատմաբաններ պատրաստելը
իրարուց մի փոքր կը զանազանուի: ըստ մեզ ևս՝ իրաւի շատ
կարեոր է առաջններին մեր մատենազրութեան և զրակա-
նութեան գլուխուն ներշնչուց ամենայն հմտութեամբ և
մեկնաբանութեամբ ուսումնասիրելը. բայց այն ժամանակը աշա-
կերտաց դպրոցական ժամերն ևս չը պիտի ներէին՝ բացի այդ-
քանը ծանօթանալ դարձեալ „և այլներին և այլներին»: Չա-
փը չը պէտք է կորցնել:

3) „Պիտոյ է նոյնպէս տեղեկանալ այժմեան ընտիր զա-
„նազան նայութեան զրուած շարադրութեանց և հա-
„առածներին (Խաչ. Աբովիան և միւաները) նայոց լընդց-
„ւոյ պատմութեանը, ուստանութեանը, արտադրութեանց և ծիսից
„պատմութեանը և հին և նոր իրականներն»:

4) „Եշակերտները պիտոյ է իմանան թուարանութիւն,
„(ալժէքոա) և այլն. . . . առհասարակ ճեմարանական մա-
„թեմաթիկայի մասը, ընդհանուր պատմութիւն, ընդհանուր
„աշխարհագրութիւն, այսաստանի աշխարհագրութիւնը և
„ստորագրութիւնը (Հ. Վ. Վլշանեան), և Հայաստ. պատ-
„մութիւնը, այոց գրականութիւն (Պալասանեան Ա. հատ.

, և ։ Օարբանելեան), ընտիր բանաստեղծութիւնք (Շնոր-
,,հալի, Վլշան. Ո. Պատկանեանց), հին և նոր ընտիր աղ-
դային երգեր»:

Չը զիտենք ինչո՞ւ առ հասարակ մեր ուսումնարանաց
և նոցա ծրագրաց մէջ միշտ մոռացութեան կը տրուի ընդ-
հանուր զրականութեան պատմութիւնը, գուցէ՝ վախելուց
թէ՝ մեր աշակերտները օտար ազգաց հեղինակների զրուած-
ներով կարող են յափշտակուիլ և կարելորը մոռանալ: Բայց
միթէ կարելի է թագցնել աշակերտաց աչքէն այդքան մեծ
բանը, որպէս է Երբոպական զրականութիւնը: Լաւ չէր՝
աշակերտները դորա պատմութեանը տեղեկանալով՝ Երբոպա-
կան հեղինակներէն գոնեա՝ արժանաւորներին և մի քանի
գլխաւորներին միայն կարդան և ո՛չ ամեն ձեռք ընկածը
գաղտ 'ի գաղտոյ:

5) „Պիտոյ է գծագրական կարչութիւնն այստեղ՝ գլխա-
ւորը մոռացուել է թէ՝ նախ և առաջ վարժապետացուն
պէտք է լու յետու ունենայ՝ այսինքն՝ թէ՝ թանաքով, թէ՝
մատիտով և թէ՝ կրով գեղեցիկ և պարզ զրէ:

6) „Տէրութեան լեզուն զրականապէս»:

7) „Թիղեքա, բնական գիտութեանց Ճեմարանական
կուրսը»:

Կաւելացնենք՝ զրոձնականապէս և իրերացուցական կեր-
պիւ. այդ է պէտք վարժապետացուին:

8) „Պէտմաներէն տառաջին և երկրորդ մաս չերականութեան,
„ուշել գրել և կարդալ և տառաջ բառարանի օգնութանութեան լուրգ-
,,մանել՝ պատմութանական, սորորագրական, աշխարհագրութան և մալեմա-
,,լեկայի վերաբերեալ հապուածներ»:

9) „Եթէ կարելի է գիմնաստիքա—մարմնամարզութիւն»:

Տփւիսում և Պօլսում 'ի հարկէ կարելի է և անշուշտ
պէտք է. չէ՞ որ այժմ ամենը խոստովանում են թէ՝ մար-

մասմարզութիւնը իսկական մանկավարժի ամենակարեւոր իմաշնալու նիւթերից մինն է։ Այս այս կարդէն է և երաժշտութիւնը, որ պէտք է այստեղ աւելցնել։

,Եթէ մեր ուսումնարանների մէջ այս բոլորը չ'են ու ուսուցանում, պիտոյ է ընտրեալ աշակերտներից կազմել առանձին դասատուն և առանձին վարժապետներ պարապեն նոցահատուներով և գիտութիւններով։¹⁾

Եթէ առանձին կարելի է, պատճառ չ'ենք տեսնում ի նշու բոլորի համար չը լիներ այդ. կարծենք թէ՝ ծախսը միենայնը պիտի մնար. գործը մի փոքր պիտի յապաղէր. դորամասին խօսիլ ևս պէտք չէ։ ,Այսպէս պարտ ու պատշաճ պատրաստուած աշակերտներին ուղարկել ։ Էկուին կամ ։ Երեւերգ, յանձնելով նոցա այդ քաղաքների ուսուցչապետաց, խորհրդի հովանաւորութեանը։¹⁾

Այս ծրագիրը գուցէ շատ մեծ և անդորձադրելի երեխատերին. Իայց չէ՞ որ երջանկայիշատակ ։ Կերսէսը իւր ուսումնարանի բացման օրէն՝ կը պատմեն թէ՝ սորանից շատ

¹⁾ Ասում ենք թէ շուտով արդէն կատարվելու է Ներսիսեան դպրոցի Յորեւանը. 50 տարի մտածեցեր մի՛. . . . Ճամանակն է մեր Հոգեւոր բարձր իշխանութեանը վերջապէս պատուել իրենց եղբայրակցի հանգուցեալ Ներսիսիյատակը. եւ ի սրտէ յառաջադիմութիւն ցանկալ նորա ուսումնարանին, Թողով մի կողմ արեղայական հին կրեքը.

Ճամանակն է Մակար Սբագանին ցոյց աալ Ներսիսի հետեւորդ լինիլը, եւ իւր հոգաբարձուաց հետ այժմ ոգևորվի նորա լայն ծգութմներով ուսումնարանին բարձր եւ որոշ կերպարանը տալու ժողովրդի բուն կարօտից համեմատ. . . .

Ճամանակն է եւ ազդին իւրեան յիսուն տարի հաւաաարիմ ծառայող դպրոց վերջապէս դնանատել, նոր կեանք տալ նորան: Մանաւանդ Ներսիսեան դպրոցի հին աշակերտներին ենք ասում. ժամէ իրանց կրթութիւն տուող ուսումնարանին երախտավէտ լինիլ եւ նորա շնորհիք վայելած այժմ 400 հաղարների գէթ մի հաղարները նուիրել նորան վերոյիշեալ նպատակները իրադուու համար, Ներսիսի գործը անմահացնելու մտօք:

առաւել հարուսա ուսման ծրագիր իրագործելու կը դիմէր Վրդեամբ այսքանը գոնեա տեսնուել է, որ սկզբներում ։ Եւր սիսեան Պապոցը Թիֆլիզու Ճեմարանից յետ չէր մնում. Ընդհակառակը՝ առաւել զարդացած աշակերտներ կը պատրաստէր: Եթէ այդ կարելի էր մեզանից 20—30 տարի յառաջ, ի՞նչու այժմ, որ դպրոցը զլխաւորապէս լուսաւորեա: աշխարհականաց հոգաբարձութեան տակ է և այլն. . . . Կ՞նչու այժմ այդքան յետ մնացել ենք, որ վերը բերած մի համեստ ուսման ծրագիրը մեզ անհասանելի կարողէ թուել: Երեւի այն պատճառաւ, որ մեր՝ լուսաւորեաներիս յառաջազիմութիւնը՝ խեցգետնի քայլերին և շարժմանը շատ կը նմանի . . . : Եւ մի՞թէ ամենայն զգայուն և ազնիւ ։ այ սիրտ չը պիտի ճմի և սեղմուի, ամեն ամօթիսած ։ այի երես հարիւր և հարիւր անգամ չը պիտի կարմրի՝ երբ միտ բերէ թէ՝ մօտաւորապէս 4 միլլիոն մի ազգ, զանազան լուսաւորեալ կեդրոնների մէջ բուն ունեցող՝ միակ մի ուսումնարան չ'ունի, որ արգեւամբ իրագործէր օտար ազգաց գէթ միջնակարգ ուսումնարանների պրօդրամման:

Գալով մեր առաջուայ համեմատութեանը, եթէ մեր յիշեալ ուսումնարանքը գեռ երկար ժամանակներով իսուլ մնան իւրեանց ազգանուելի կոչմանը, պէտք է խասավանել այն ժամանակ թէ՝ մեզ իրաւի տիրել է և կը տիրէ այն ահաւոր ել տաժանտ ախտը, այն երեխայական թշնամին, որ կ'անուանի անդղեական ցաւ կամ ինչպէս ուսումնականք կը գոչեն՝ ռաքիսիզմ (ոսկրացաւ): Այդ երեխայից մատաղ կաղմուածքի մորակը՝ երբեմն տարիներով յետ է ձգում երեխայի ատամների ծնելը և նորա առհասարակ ֆիզիքական զարդացումը:

Երանի թէ՝ միայն այդքա՞ն. նա կոշտութուշտերով լցնում է երեխի գագաթի ոսկորները, նորա կողքերը, վերջապէս ծումուում է նորա ամբողջ ողնաշարը, այդ կերպ՝ այլանդա-

կում նորա բոլոր մարմինը՝ բստ մեծի մասին շուտով գերեզման ևս իշխնում: Տպիտութիւնն և անտարբերութիւնն է այդ մեր ցաւը, թէ մի ուրիշ բան. . . . :

Ի՞այց քանի հեռու կը դիտենք մէզնէ այդ արխուր պատկերը, քանի՛ չը կամինք տեղեք տալ՝ մեղ տիրելու այդ տխուր ապագային, նոյնքան առաւել ամենս պիտի աշխատինք շուտով պարզելու և պարզաբանելու մեր կարևոր խնդիրները: Ահաւասիկ մեր կողմանէ՝ “վարժապետներ պատրաստելու խնդրոյ” վերաբերութեամբ մինչ ց’այժմ լսուած խոհեմ ձայներին՝ մեր հասարակութեան մէջ առաւել արձագանք գտնելու համար պարտք համարեցինք յետագայում բերել մեծանուն մանկավարժ Աէրի ոյխուն տեղիներից՝ քաղուածներ՝ յարմարացնելով մասամբ մեր պայմաններին և պահելով միանգամայն անփոփոխ գլխաւոր սկզբունքները: Այդ իսկ սկզբունքները մեր մէջ գործադրելու թարգման միայն կամեցանք լինիլ մեր նախընթաց խորհուրդածութիւններով, և այդ կերպ՝ նորէնք քնած չը թողնել կը ցանկայինք միայն:

ՎԵՆԻ ՄԻ ԴՐՈՒԹՎԻԿԵՔ

Թէ Ի՞նչՊէս Պէտք է ՊԱՏՐՈՍՏԵԼ ՄԱՆԱՎԱՐԺ ՈՒՍՈՒՑԱՆԵՐ:

1) Ակզենական ուսումնարանների վարժապետները կամ մանկավարժ ուսուցիչները պէտք է առաջ գան ժողովրդի սպառչն կոչեցեալ դասերէն, այսինքն՝ գիւղականաց, շնչականաց, ստուրին վաճառականաց կացութենէն: Սակայն իւրեանց կը թութեամբ այդ դասերէն բարձր և գերազանց պիտի լինին, որ կարողանան իրաւի ժողովրդի նույնան դաստիքաբանական կոչուիլ: Պէտք է նոցա մէջ պահպաննել իբրեւ գանձ իւրեանց ժողովրդական ընաւորութիւնը և բարի յատկութիւնքը, որ նոցա բոնած դրութիւնը լինի մեջորդական՝ ստորին կամ անկիրթ

դասի՝ և վերին կամ լուսաւորեալ հասարակութեան մէջ տեղը: Ահա՛ այսպիսի հայացքի կէտէն պիտի դուրս գայ ամենայն կարգադրութիւն սկզբնական վարժապետաց վերաբերեալ եթէ ո՛չ շատ սխալնաց և ափսոսանաց տեղեք կը տրուի:

2) Ուսուցչաց կրթութիւնը պէտք է ընթանայ ամբողջ ազգային կեանքի հեղեղի հետ, և պէտք է լինի իւրեանց ազգայնութեան, իւրեանց դարու՝ գիտակցութեան, ձգտմանց և լուսաւորութեան արտադրութիւնը, նայելով թէ՝ այդ ազգայնութեանը՝ այդ դարու մէջ ի՞նչպիսի ուժեր են հարկաւոր, հետևելով միւս կողմանէ արդէն ընդունած բարւոք դաստիարակութեան կանոններին:

3) Ուսուցիչներ պատրաստելու ժամանակ պէտք է ’ի նկատի ունենալ, թէ՝ ազգային ուսումնարանը ժողովրդի ո՞ր պիսի տեղական և ընդհանուր կարօտութիւններին պիտի դարման տայ, և թէ՝ նախակրթական ուսուցիչն է՝ այդ պիտոյքներին համեմատ կրթութիւն և լուսաւորութիւն ծաւալողը և ժողովրդի անմիջական խորհրդատուն:

4) Ուսուցչի այսպիսի բարձր դրութիւնը, որպէս դաստիարակ և կրթիչ ժողովրդի, կը պահանջէ նորանէ բաց ի անձնութիւնութիւն և սէր առ իւր վեհ կոչումն, տակաւին և պատուական բնաւորութիւն, գերազանց մտաւորական և բարյական յատկութիւնք, օդտակար տեղեկութիւնք թէ՝ տեսական և թէ՝ գործնական:

5) Մանկավարժ ուսուցիչներ պատրաստելիս՝ պէտք է ձգտենք նախ՝ նոցանէ լուսաւորեալ մարդ և բարի քաղաքացի դաստիարակելոյ, անբաժան ’ի հարկէ ազգայնական տարբերէն: Եթէ կրորդապէս արդէն՝ իւրեանց մասնաւոր պաշտօնին վերաբերեալ հարկաւոր պատրաստութիւնը մատակարարուի: Այս կերպ՝ նոցա տեսական և գործնական տեղեկութիւնները սկզբնական ուսումնարանների ծրագրէն շատ առաւել բարձր

պէտք է լինին, մինչ զի շօշափեն վերին ուսումը: Ի՞այց և աչքէ չը պիտի թողովի ժողովրդական դպրոցների խականն և կարեոր պահանջները: Այսպիսի՛ դործի մէջ ուրեմն ծայրայեղութիւնը աւելորդ է. ո՛չ շատ խորին գիտնականութիւն կ'ուզենք և ո՛չ թերուսութիւն. այլ՝ պէտք է հետեւնք առածին՝ ոքիչ գիտցի՛ր՝ լաւ գիտցիր¹⁾: Որպէս զի բազմաբեռն ուսումը թեթևակշխո չը լինի:

6) Ուսուցչաց բուն պաշտօնին վերաբերեալ գործնական կրթութիւնը և վարժապետական բարձրագոյն գիտութիւնը պէտք է աւանդուի կամ ստացուի անշուշտ այդ դիտմամբ հիմնուած մասնաւոր ուսումնարանների մէջ, որ կ'անուաննեն Ապրժագետուան՝ Դարրոց չամ ճանշապարհուան՝ Ամենար, ուր վարժապետաց ուսումը կ'սկսուի 18—20 տարեկան հասակէն և ո՛չ վաղ¹⁾:

7) Այն ժամանակամիջոցը, որ կը մնայ աշակերտի սկզբնական կամ ծխական ուսումնարանից դուրս զալէն յետոյ՝ մինչ ի վարժապետական Դպրոց մտնելը, մօտաւորապէս՝ 12—14 ից մինչ 18—20 տարին՝ բաւական է ապագայ ուսուցիչների կրթութեան համար. այսինքն՝ այն կրթութեան, որ պէտք է ունենայ ամենայն մարդ, ամենայն քաղաքացի՝ թէ՛ վարժապետ թէ՛ քահանայ թէ՛ վաճառական և այլն:

8) Այդ ժամանակամիջոցի ուսման սահմանները կարելի էր նշանակել Տէրութեանց միջնակարգ ուսումնարանների (Գիմնազիօնների) պոօդրամմայով (ծրագրով) մինչ ի 7-րդ դասաւունը:

¹⁾ Մեր մէջ որովհետեւ այսպիսի դպրոցներ ունենալու յոյսերն զեռ բաւականին նեռու ապագայումն է. ուստի նարկաւ պէտք է դիմենք Եւրոպային, մանաւանդ, հիւսիսային գերմանիային եւ Զվեցարիային: Այս մասին դարձեալ կիրաիրենք մեր ընթերցողի ուշադրութիւնը Պ. Մ. Միանարեանի վերջաբանութեան մեր ցուցած երեսներին:

9) Սակայն Գիմնազիօնը ինքն ըստ ինքեան իւր հանգամանքներով՝ առած վարժապետացուներ պատրաստելու չէ կարող ծառայել, նա զի ունի շատ անյարմարութիւնք այդ կողմանէ:

Առաջինը՝ օտար լեզուներ Գիմնազիօնաց կամ առհասարակ Տէրութեանց միջնակարգ ուսումնարանաց մէջ այնքան մէծ տեղ ունին բանած, որ մայրենի լեզուի դասատւութիւնը շատ յաջող չէ: Խակ այժմեան դաստիարակութեան առածներից (աքսիօմ) մին է թէ՝ մանկավարժ—ուսուցիչը ամեն բանէ առաւել իւր լեզուին պիտի քաջահմուտ լինի:

Երկրորդ՝ ցանկալի էր որ կրօնական տարրը բաւականին տեղ ունենար, մանաւանդ՝ պատմական—իրադադիտութեան մէծ նշանակութիւն ունի ժողովրդական ուսուցչի համար:

Երրորդ՝ երաժշտութիւն սովորցնելը և այլ մի քանի մարդութիւնք—ապագայ վարժապետին յոյժ պիտանի՝ Գիմնազիօններում չ'են ընդունուած:

Չորրորդ՝ Գիմնազիօնի 7-րդ դասատուն հասնողը շատ հազիւ թէ՝ վարժապետութեան հետեւ՝ աչքի առջև ունենակով իւր պատրաստութեան համեմատ աւելի յարագ ապրուսաի ճանապարհներ:

Ա երջապէս՝ մէր սկզբնական ուսումնարաններէն դուրս եկող աշակերտները ուղղակի գուարութեամբ պիտի կարողանան մտնել Գիմնազիօն, եթէ նորանից իրաւի օգուտ և լինէր վարժապետութեան դիտմամբ:

10) Միւս կողմանէ՝ եթէ զանազան հոգաբարձութիւնք մասնաւորապէս հոդ չը տանեն ուսուցիչներ պատրաստելու, և առանձին գումար չը նշանակեն այդ ամենակարեւոր գործի համար, թո՛ղ չը յուսանք թէ՝ սեփական ծախիւք վարժապետ պատրաստուող լինի: Որովհետեւ ո՛վ հնար ունի ուսում առնելու, նա դժուարութեամբ կը գնայ սկզբնական ուսուցչու-

թեան տաժանելի և փշոտ ձանապարհով. Հարկաւ՝ այնու-
հետեւ ուսուցիչ դառնում են այն անձինք, որք ո՛չ մի գործի
ընդունակ չ'են, և ամենաեին ձգուում և հասկացողութիւնն ես
չ'ունին մանկավարժութեան բարձր կոչման վերայ:

11) Աերը բերած զրութիւններէն ուղղակի կը հետեւի
թէ՝ հասարակութիւնը, եթէ նա բոլորովին թմրած չէ, իւր
սրբազն պարքը պիտի համարէ՝ վարժադրվագուտաց համար տառան-
չըն պատրաստածն վարժադրաննէր հետևուած, որ և լինի սկզբնական
ուսումնարանների և վարժապետական սեմինարների միջինը:

13) Այդ պատրաստական վարժարանները ըստ կարեաց՝
լու կը լինէր, որ բացուէին նահանգական փոքր քաղաքների
մէջ, ուր աշակերտեալքը հաղորդակից գոլով նոյն խսկ քաղա-
քացոյցը և չը խորթանալով տեղական գերդաստանաց կեան-
քէն՝ ապագայում առաւել յաջող պիտի գործէին ժողովրդի
մէջ²⁾:

14) Առհասարակ ամենայն ապագայ ուսուցիչ՝ պէտք է պատրաստուի մեր յիշած ուսումնաբաններում։ Բայց միւս

¹⁾ Ուրեմն, այսպիսի ուսումնարան առանց զբժուարութեան կարող էին լինել մնագնում Նուպար—Շահնադ,—վարժարանը, Ներսիսեան Դպրոցը եւ այլ սողա յափ հնար ունեցողը,—ինչպէս այս մասին վերը խօսեցինք:

ուսումնարաններից ևս, զօր օրինակ՝ Գիմնազիօններից ևայլն, եթէ ցանկացողք լինին ազգի գումարով Եւրոպա գնալ վարժապետական կատարելութիւն առնելու, կարող են ընդունուիլ; Միայն՝ այդպիսիները նախ՝ մեր ուսումնարաններում աւարտող աշակերտաց հետ վերջնական հարցաքննութեան պիտի ենթարկուին: Ոսով պիտի ապացուցանեն թէ՝ վարժապետութեան վերաբերեալ տրամադրութիւնքը և իւրեանց այդ կողմանէ մի քանի թերութիւնքը նախապէս լրացրած են ինքն ըստ ինքեանց մասնաւորապէս պարապելով:

15) Մանկավարժական ուսումնարանը պէտք է ունենայ երեք դասատուն, երկու գլխաւոր ուսուցիչք և երկու օգնական: Գլխաւոր ուսուցիչներից մէկը կը նշանակուի Տեսուչ: Տեսուչը կարող է լինիլ մի որ և է բարձր ուսումնարաններում աւարտածներից. Փայն թէ՝ յայտնի պէտք է լինի դաստիարակութեան վերաբերեալ իւր գլուածներով: Արօնի դասերը պէտք է յանձնել կրթեալ տեղական հոգեսորականի¹⁾:

16) Անկավարժական վարժարանը միշտ պէտք է գործունեայ հաղորդակցութիւն ունենայ այն վարժապետական սեմինարների հետ, ուր գտնուում են իւրեանց վարժապետացուները. և պէտք է իւրեանց ուսումնարանի գործունէութեան հետևանքները վկայեն տարին միանգամբ հարցաքննութիւններով:

17) Ուսման ձեզ այսպիսի մանկավարժական ուսումնաբանում անշուշտ իրերաբաշխութեան կամ իրերացուցակն պէտք է լինի. որպէս զի մեր վարժապետացուները Խրոպայում նորէն սովորելու դբուարութիւնները չը կրեն. այլ՝ պատրաստական կրթութեամբ արդէն ընտելացած լինին այդ՝ մանկավարժ ուսուցչի ամենակարեղոր մեթօդային:

¹⁾ Πιρκείδης αγημένος ήταν στην πόλη της Κωνσταντινούπολης και έγραψε μια συντομή λογοτελή στην οποία ανέφερε ότι η Ελλάς είναι η μόνη χώρα που δεν έχει θέση στην Ουάσινγκτον.

18) Ահա՝ այսպիսի ուսումնարաններում աւանդելու գիւտութեանց գլխակարգութիւնը՝ կամ իւրաքանչիւրի համառօտ ծրագիրը, որ պէտք է երեք կամ չորս տարուայ բաժանել:

Ա) ԿՐՈՆ. վերեւ սորա մասին խօսեցինք:

Բ) ՄՈՅԻՆԻ ԼԵԶՈՒ: Աա պէտք է լինի բոլոր պատրաստական ուսման կեղրոնը՝ և իւր մէջ պարփակէ:

Վ) ՔԵՐՊԻՇՆՈՒԹԻՒՆ: Աասանց բանի կազմութիւնը, բառերի համաձայնութիւնը, տրոհութիւն, առողջանութիւն, բայց աշտրութիւնք համանուանց և մասամբ ճարտասանական փոխարերութեանց: Աարժութեանց համար պէտք է ընտրել երեսելի գրուածներ և ժողովրդական առածներ:

Ր) ԸՆԱՌԱՅԻՇՆՈՒԹԻՒՆ: Աանոնաւոր ընթերցանութիւն թէ՛ արտասանութեան և թէ՛ միտքը պարզ յայտնելու կողմանէ, լաւ հասկանալով կարդացածի բովանդակութիւնը՝ նոյնը ուրիշն ևս հասկացնել պատմելով:

Դ) ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ: Աորան պէտք է վարժեցնել հիմնուելով ստուգարանութեան և համաձայնութեան կանոնների վերայ. նախ՝ մասնաւոր կամ առանձին նախադասութեանց, և յետոյ մեծ յօդուածների սադրանօք (դիքտեներով): Աշակերտաց միւս զիտութեանց վերաբերեալ գրութիւնների մէջ ամեն ուսուցիչ պիտի միտ գարձնէ ուղղագրութեանը:

Ե) ՈՃ: Աարժապետացուներին պէտք է վարժեցնել զանազան պատմախօսութեանց, նկարագրութեանց և ստորագրութեանց, ոտանաւորներից արձակ շարադրութիւն կազմելուն: Հարաբերական գրել առաջ շատ ցանկալի էր որ ազատութիւն և հնար տային՝ աշակերտաց զրուածները սեփական և ինքնուրոյն աշխատութեանց նմանելու: Աերջապէս պէտք է նաև մակագրութեանց, վաճառականութեան և այլ գործառնութեան մէջ գործածած թղթագրութեանց ձևերին ծանօթա-

ցնել: Ամենայն՝ թէ՛ գրուածի և թէ՛ բերանացի խօսուածքի մէջ պէտք է աշակերտաց ուշադրութիւնը դարձնել՝ պարզաբանելու, ճշդութեան և համառօպութեան:

Գ) ԹՈՒԱԲՍՆՈՒԹԻՒՆ և ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՋԱ, ՓՈՒԹԻՒՆ: Աարժապետացուն պիտի հմտանայ՝ կեանքի մէջ սովորական ամեն հաշխեները՝ զիւրութեամբ կատարել թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր կերպիւ, պէտք է ծանօթացնել, տեսական և թէ՛ վերադրական՝ թուաբանական և երկրաչափական համեմատութեանց, համահաւասարութեանց և հաւասարութեանց, այնչափ՝ որ շատ մի աշխատավոր խնդիրներ թուաբանօրէն կարողանան լուծել: Երկրաչափութեան սկզբունքը՝ մինչև եռանկեանց նմանութիւնքը և Պիւթագորեան լէկունան: Եւ վերջապէս թէ՛ գծերի, թէ՛ մակերևոյթից և թէ՛ նորմանց չափողութիւնը՝ պէտք է լինի օրինակներով և կեանքի մէջ հարկաւոր գործածական խնդիրներով:

Դ) ԱՇԽԱՋԱԳՐՈՒԹԻՒՆ: Այսաեղ կը լինին ընդհանուր տեղեկութիւնը՝ երկրի ձևի, մեծութեան և շարժման վերայ: Ընդհանուր տեսութիւն բոլոր մասանց աշխարհի և Եւրոպայինն առանձին: Աանսաւորապէս վարժապետացուները լաւ տեղեակ պէտք է լինին իւրեանց հայրենեաց աշխարհագրութեանը և հարեւան ազգաց քաղաքական և տեղական դրութեանը:

Ե) ՊԱՏՄՈՒԹԻՒՆ: Աենդանի և կենսագրական պատմախօսութիւններով ընդհանուր քաղաքակրթութեան պատմութեան հետ՝ պէտք է հայրենեաց պատմութեանը մանսաւանդ շատ մերձաւոր տեղեկացնել:

Զ) ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ: Պէտք է հիմն գնել ընութեան երեք թագաւորութեանց պատմութեան քաջ ծանօթացնելուն. և մանսաւանդ այն ամենահարկաւոր կենդանեաց, բուսոց և հանքաց խումբերը ցոյց տալ և նկարագրել որոնք առաւել,

պէտք են և գործածական՝ վաճառականութեան և զիւղական տնտեսութեան մէջ¹⁾:

ს) სკაზნაცის ზებულონი: **Պէտք է սկսել փորձառութեան հիմքերով,** և այդ կերպ՝ բացատրել բնութեան ընդհանուր երևոյթները. Տանօթացնել մի և նոյն ժամանակ՝ քիմիայի դիսաւոր հիմունքներին²):

Ը) ԳՐՈՒԹԻՒՆ (կալեգրաֆիայ). այստեղ կանոնաւոր կերպիւ պէտք է սովորյնել զբիչ կտրել, զրիչը կարդով բռնել և շարժել։ Պէտք է վարժեցնել գեղեցիկ արագազրութեան և պարզ գրելուն՝ մանաւանդ տախտակի վերայ։ Առհասարակ վարժապետացուի ամեն զրուածների մէջ պէտք է ուշը դարձնել չէ-ոչ կանոնաւորութեան՝ գեղեցկութեան և պարզութեան³⁾:

թ.) ՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ: **Ակզենական հրահանգ նկարչութեան.**
գծագրական նկարչութիւն գործնական կեանքին յարմար:

Ճ) ԵՐԱԾՆՏՈՒԹԻՒՆ (մուղկեքայ): **Պարտաւորեալ** է ամենայն աշակերտ սովորել՝ երգեցողութիւն, ջութակի վերայ ածելը և երաժշտութեան տեսական մասը (?): **Պարտաւորեալ** չէ՝ դաշնամուկը (Փօրտեպիանօ), երգեհոն (օրգանը): **Ամենափոքրը** այնքա՞ն պէտք է լինի, ո՞րչափ և որպիսի կարօտութիւն կայ կանոնաւոր երգեցողութեան ժողովրդական դպրոցների մէջ՝ և առհասարակ ժողովրդի մէջ:

1) Այստեղ, բացի սովորական ծեռնարկները, մեր վարժապետաց ձեռաց տակ ունենալու օգտակար կը համարինք, Հ. Եւդ. Վ. Համբարեանի «Գործնական վաճառափառութիւնն» Վիեննա 1857, եւ մասամբ Հ. Եփր. Վ. Զագրինեանի «Գործնական արուեստավայսուութիւնն» Վիենն. 1857:

2) Մեզ համար Հ. Նուիրաննեանի «Փորձառական բնագիտութիւնը կամ ֆիզիքայ բիմիայով» գիտող վարժապետի մեռին միայն շատ օգտաէտ կը լինէր: Հ. Քաջունոյ մեծադիր բիմիան անդործադրելի է այնպիսի ուսումնարանաց մէջ—մանաւանդ իւր լեզուով: Բայց տեսչի մեռաց տակ պիտի լինի այդ էլ:

³⁾ Պ. Միանսարեանցի «կանոնաւոր և, գրութեան» գիրքը:

Ճ.Ա.) ՄԱՐՄՆԱՄՄՈՌՋՈՒԹԻՒՆ (գիմնաստիքայ): Սորա կարևորութիւնը վարժապետի համար այնքան այժման ակներեւ է, որ այստեղ՝ աւելորդ կը համարիմք երկարելը: Այս մասին մեր պարբերական թերթերի մէջ ևս բաւականին խօսել են:

19) Այստեղ աւարտող աշակերտները կ'ուղարկուին Եւ-
րոպա վարժապետական Դպրոցներ:

Վարժապետական սեմինարների պուօքրամման, մենք
այստեղ չենք բերում՝ առանձին հարկաւորութիւն չը տես-
նելով։ Ըայց մի փոքր գաղափար ստանալու համար այդպի-
սի դպրոցների վերայ՝ ընթեղողը կարող էր կարդալ՝ դար-
ձեալ „Քնար—Այկ.“ մէջ տպած ։ Գ. Պատկանեանի
թարգ“։ „Դօրբաթեան վարժապետական սերմնարան“ վեր-
նագրով։ Օգուշացնում ենք՝ որ գաղափարը շատ աղօտ կը
լինի, որովհետև Դօրբաթինը՝ Գերմանիոյ վարժապետ“։ Աե-
մինարներէն շատ զած է։

Այդ ինստիտուտը ապագայում մեծ նշանակութիւն կ'ունենայ մեր Առվկասի ժողովով ըրդական ուսումնարանաց վերաբերութեամբ։ «Երսխեան դպրոցի այժմեան լաւ աւարտած աշակերտներին՝ խորհուրդ ենք տալի՛ ոռուսերէն լեզուից լաւ պատրաստուիլ և անվախ մտնելու աշխատել այդ ինստիտուտը»

¹⁾ Խոսք չկայ, որ Առևտիաբնակ հայոց համար ամենահարկաւոր ուսանելիք լեզուներից մէկն լինելու է տէրութեան լեզուն:

հաւտաացէ՛ք ինձ, և մի՛ք լսիլ իրանց շուաքից անգամ վախեցող ձեր պառաւ դաստիարակներին, մտէ՛ք այդ ուսումնարանը՝ միշտ ձեր հաշուով (երբէ՛ք թագաւորակա՞ն), և հիմակուց ամենիդ կարելի կ'լինի երաշխաւորել 5—5 տարով 7—8 հարիւրական մնթ. տարին ոռջիկ մեր ուսումնարանաց մէջ: Չեր մայրենի լեզուն ձեր սեփական ջանքով այնտեղ ուսումնասիրելուն ո՛չ ոք չե խանգարիլ: Խսկ թէ ի՞նչու այնտեղ տեղական լեզուներ գաս չ'են տալի, այդ իրենց գիտնալու բանն է, ամենեին մեր մտածելու բանը չէ. մենք միայն մեր մայրենի լեզուից լաւ պատրաստուած արդէն՝ կ'մոնենք, և այնտեղ էլ մենք մեզի կարող ենք շարունակել՝ իրեւ խելահաս պատանիք. (այդ ինստիտուտը ընդունվում են 16—20 տարեկան հասակից): Այդ ինստիտուտի վերայ սխալ կարծիքներ շատ կան, մի՛ք հաւատալ, ես անձամբ ամեն բանին տեղեկացած և համոզուած եմ խօսում ձեղ հետ, աշխատեցէ՛ք, որքան կարող էք օգուտ քաղել այդ օգտառէտ հիմնարկութենից և մեր ուսումնարանաց ծառայել:

Խորհուրդ ենք տալի մեր գաւառական հեռատես հոգաբարձութեանց այժմէն իսկ իրանց յառաջադէմ աշակերտներից աւարազներին ոռուսաց լեզուի մէջ յառաջացնել և իրենց հաշուով այդ ինստիտուտը տալ, մինչեւ Կերսիսեան դպրոցի մեր յիշեալ ծրագիրը ընդունելը, առ այժմ այդ Ինստիտուտից իրենց համար վարժապետներ ձեռք բերել: Տարին 150 մնթ. միխելով, այդ Ինստիտուտից չորս տարուայ մէջ դուք ձեր համար 5—6 տարով հաստատ վարժապետ կ'ունենաք, որ համեմատաբար շատ աժան է, եւ դոքա երբեմն Գերմանիայից եկածներից լաւ գիտեն իրենց մանկավարժութեան արհեստը: Այս ամենը ասելով՝ մենք չ'ենք պնդում թէ այդ ինստիտուտը թերութիւնք չ'ունենայ. ոչ, մեք այդ թերութիւնանցը լաւ ծանօթացած ենք և տեղեկացած: Մեր ասելն այսքանն է

առ այժմ այդ ինստիտուտից պէտք է և հարկաւոր է որ օգուտ քաղենք մեր ողորմելի ուսումնարանաց համար. մինչեւ որ Կերսիսեան դպրոցը հասկանայ իւր նշանակութիւնը և այդ մեր կարօտը ինքը լինելու ձգտի, որի կատարմանը անհամբեր սպասում ենք:

ՅՈՒՆԵԼՈՒԱՆ II. Կաջմիածնայ նորակառոյց Դ'եմարանի վերայ մենք էլ ուրիշների հետ, ինչպէս և նորա Ա'եհավիառ Հիմնադիրը—1870 թւին, այո՛, մեծ յօյսեր ունէինք՝ մերազնեայ հոգեւորականաց մէջ բարձր կրօնական ուսման ծաւալելու նկատմամբ: Այդ կողմանէ մեզ շատ քաղցր թուացին „Ս'եղուի“ այս մօտ համարների մէջ տպած „Պորպատի ուսանող“ ստորագրութեամբ յօդուածի երկար ու բարակ փիլիսոփայութիւնները, որոնցով նա աշխատում է ապացուցանել թէ՝ բարձր աստուածաբանական ուսումնով հոգեւորականներ մեր մէջ ևս կարելի է պատրաստել և այդ է մեր ժողովրդի այժմեան պահանջներին համապատասխան, դորա օգտակարութիւնը ըստ օրինակի գերմանացւոց (Օստգէի գաւառներում) և այն: Պորպատի ուսանողը իւր միամիտ (նախի) ջանքերով ու դատողութիւններով իմ միտս ձգեց շատ գողտրիկ զգացմունքներ, ինչպէս երեսում է մեր վերը բերած ծանօթութիւնից, երբ մենք էլ հայրենիքից դուրս՝ շատ հեռուից միշտ այդպիսի գեղեցիկ երազներ էինք տեսնում: . . . եւ այդ յօդուածի առաջի վայրկենի զուարձալի զգացմունքները՝ շուտով տեղի տուին մեր մէջ կրկին տիմրութեան և անձկութեան ինչպէս տիմրում է շքեղ երազների ազդեցութեան տակ՝ անշուք իրականութեան մէջ արթնցած մարդը:

Այրելի Պորպատի ուսանող, արի՛ քեզ հետ տանէցտանու խօսինք. Չէ՞ ո՛ր քո բոլոր յօդուածի շնչերը գլխիդ մէջ մի լուպէում իրեւ երազների ազդեցութեան տակ՝ անշուք իրականութեան մէջ արթնցած մարդը:

եթէ մի ամենահասարակ բան՝ ի նկատի առնում քու գիտացածից և տեսածից. այն է թէ՝ Դորպատի համալսարանի բարձր Աստուածաբանական մասնաբաժինը (Փակուլտատ) մշտնում են տեղական գիմնազիօններում աւարտած զարդացած երիտասարդներ, յետոյ նոքա Համալսարանում միևնոյն ընդհանուր զարդացման պայմանների և ազգեցութեանց տակ յառաջ են ընթանում, բոլորովին ինչպէս միւս Փակուլտետների ուսանողք՝ իրաւաբան, բժիշկ, բնագէտ և այլն, և նոքա իրեւ զարդացած ուսանողներ ոչընչով չ'են զանազանվում միւսներից, բացի իրենց մասնագիտութեան։ Իսկ քո առաջարկած Աստուածաբանական Փակուլտետով հայկական համալսարանը ո՞րտեղ է, ո՞ր վանքի անկիւնում ես զետեղում նորան. եւ դու կարծում ես թէ՝ անկիրթ տիրացուներին ու արեղաներին կարելի է այժմեան ժամանակս բարձր Աստուածաբանական գիտութիւնք աւանդել . . . : Դու կարող ես ինձ պատասխանել թէ՝ „թող մեր միջնակարգ ուսումնարաններից Գերմանիոյ Աստուածաբանական Փակուլտետները պատրաստվեն, եթէ հիմայ դժուար է մեզանում բաց անել“։ Այսո՛, շատ բարի՛, էս ժամանակ խնդրեմ աշխատիս հիմակուց միւլթոնների ժառանգութիւն ձեռք բերել որ՝ մշտական տարին 2000—3000 ռ. ոռձիկ կարողանաս խոստանալ, որպէս զեայդ տեղերից երիտասարդներ որսաս քո Փակուլտետի համար. որովհետեւ Գերմանիայում կրօնական ուսում ստացողներին մեզանում ո՛չ ժողովուրդը պիտի ընդունէ և ո՛չ մեր հոգեւորականութիւնը (չ'մուտանաս՝ էս տեղ խօսքը միւրեկու անշատների մասին չէ)՝ ինչով պիտի ապահովին նոքա, եթէ ո՛չ քո տուած ոռձըկով. . . եւ դու կարծում ես թէ՝ գերմանացի քո ընկեր ուսանողները Աստուածաբանական Փակուլտետ մտնելով՝ մի առանձին կոչումն ո՞ւնին դէպ ՚ի այդ գիտութիւնքը. Մի՛ սխալվեր, նոցա քարշում է նոյնպէս այն

նիւթական ապահովութիւնը, որ նոքա ստանում են իբրև պաստօններ՝ որոնց յանձնում են ամբողջ 6—10 գիւղեր, առաջուց որոշուած կալուածքներ ՚ի սեփականութիւն ցմահ, բացի ծխից եկածը. եւ մենք ո՛րքան տեղեակ ենք՝ չ'կայ այնտեղ պաստօր (Լատիշների, Լատերի մէջ անգամ) որ հազար ուռելուց պակաս արդիւնք ունենայ տարեկան. իսկ երեք հազար ստացողներն ես կան (գիւղօրէքից եմ ասում): Արո՞ղ ես, հրամանքու, գորպատի ուսանող այդպիսի պայմաններ մեր մէջ ստեղծել . . . :

Մինք յիշեալ 1870 թ. յոյս ունեինք թէ՝ Խջմիածնայ Շեմարանի պատերի հետ՝ գէթ մի 6—8 ուսանող Խտալիսյում և Գերմանիայում բարձր ուսում պիտի ստանան Խջմիածնայ հաշուով, որոշեալ պայմաններով, որ վերադառնան Խջմիածնայ նորակառոյց հոյակապ „չորս-պատը“ մի Նողեւոր Ըկադեմիայի նման բարձր ուսումնարան ներկայացնեն ժողովրդի տարիներով կրթնած աշացը. բայց թէ՝ մեր Ա եհափառի ազգասէր ջանքերը թէ մեր բոլորիս՝ նորա բարեկամաց՝ յցսերը թերի ֆնացին, որովհետեւ նիւթական միջոցներ չ'գրտնուեցան. եղածներն էլ այնքան քիչ էին, որ պէտք էր հեռատեսութեամբ բանկերում պահել հեռու ապագայի համար, ո՛գիտէ ի՞նչեր կ'պատահի վանքի պիտոյից նկատմամբ. . . . Եզգասէր հարուստ մարդիկ էլ դուրս չ'եկան այդ նպատակին օգնելու, էլ ո՞ւմ մեղադրենք. . . . :

Իսկ քեզ սիրելի Պորպատի ուսանող, որ կարծում եմ՝ իմ բարեկամներից մէկը պիտի լինիս, իբրև քեզ գաղափարակից երիտասարդ, հայրենիք վերադարձած և այստեղ շատ բան կարձ միջոցում տեսած ու կրած, — խորհուրդ եմ տալի՝ մայրենի լեզուիդ մշակութեան և քո ընտրած գիտութեան ուսումնասիրելուն առայժմ հետեւիս և ժամանակ չ'կորցնես ուրուականների վերայ. Ժամանակն է, վերջապէս մեր իրա-

կան կեանքը տեսնել, ճանաչել—երազներից վաղ գալ. խըն-
դրեմ խօսե՞նք, գրե՞նք, քննե՞նք այն, ինչ որ կարելի է իրա-
դորձել մեղանում: Դու Ասպուածաբանական բարձր ուսումնվ
հոգևորականներ ես ուզում թէ Ճեմարանից, իսկ ես քեզ ասում
եմ, երանի թէ՝ մի գաւառական ուսումնարանի կուրս կարե-
լի լինի նորա մէջ անցկենալ. դու պրօֆեսորներ ես երազում,
իսկ ես ասում եմ, երանի՛ եթէ դանուին ամենահասարակ
վարժապետներ. . . . չկա՞ն, ո՞րտեղից գտնե՞մ. . . :

Սոյն գրքովի լեզուն, պէտք է խոստովանենք, ծանր է:
Բայց ընթերցողը՝ ի նկատի պիտի առնու, որ դա մի փորձ է
Արևմտեան և Արևելեան մեր բարբառները միացնելու. սա մի
ձգտումն է երկու կողմանց հասկանալի աշխարհաբար գրակա-
նական լեզու ունենալու, որը՝ ի հարկէ դեռ շատ մշակութեան
և կատարելագործութեան կարօտ է:

Յունիլար 15. 1874.

Գի-Հրեցէ:



Ծախվում է Թիֆլիսում պ. Արտանեանի և ընկ".
գրավաճառանոցում:

ՄԵՄՈՒԼԻ ՏԵԿ Ե՞Ն

- 1) Գրքոյկ երթորդ թ իւսումնարանական նոր կարգադրու-
- 2) Գրքոյկ երրորդ թ թեանց առիթով: Գյեմբէցոյ:
- 3) Տոմար ընկանեկան 1874 և 1875 թուականների: